

16558

323.1
9-42.

1917

O-26.

15 JAN 2010

323.1(9).542

9-54 ԱԿՈՒԹԻՒՆ Ս. Տ...ՆԻ և Բ. Շ...ՆԻ.

ՀԱՅԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՃԱՐԺՈՒՄՆԵՐԸ

XX ԴԱՐՈՒԽԻ

Ա.Ա.Թ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ

(Մասն երկրորդ)

Գ. Բ Ե Յ

ԵՂԻՇԵ ա. քահ. ԳԵՂԱՄԵԱՆՑ

Протоіерей Егишэ Гегамянцъ. Освободительное
движение армянъ въ XX стол.

Часть II-я.

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

Տպարան Ն. Երկանցեանի, Բագու
Տипография Н. Эриванцова, Баку.

1917

26 SEP 2006

323-1

9-42

Արքայի հայոց բարեկարգություն:

ՀԱՅԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

XX ԴԱՐՈՒՄ

Կ. Ա. Մ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ

(Մասն երկրորդ)

1000
69160



Протоіерей Егишэ Гегамянцъ. Освободительное
движение армянъ въ XX стол.

Տպարան Ն. Երկանցեանի, Բաքու:
Типография Н. Эриванцова, Баку.

1917

18 MAR 2013

76558

ՀԱՅԱՍՏԱՆ

YANNUA XX

22-10

ՀԱՅԵՐԻ ԱԶԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

XX-րդ ԴԱՐՈՒԽ*

(Հայկական հարցի եօթներորդ շրջանը)

८८.

ՎՃՌԱԾ ՂԻՆԵԼՈՎ աՆՊԱՄԱԿԱՆ ԵՐՐԵԿԱԼ ԶԻՆԱԿ-
ՑՈՒԹԵԱՆ հԵՏ մԻԽԱՆԱԼՈՒ՝ յատկապէս իր զԷՆՔԸ
ԹՈւՍԱՄԱԹԱՆԻ դԷՄ ուղղելու նպատակաւ՝ ՕԱՄԱՆ-
ԵԱՆ կառավարութիւնը որոշեց օդաագործել հայ-
ուազմիկ ոյժը, Դաշնակցութիւնը, որն, իբրև
լեզար կազմակերպութիւն, արդէն ամեն տեսակ
ազատութիւն վայելում էր Տաճկաստանում ՕԱ-
ՄԱՆԵԱՆ սահմանադրութեան հոչակումից անմի-
ջապէս յետոյ, և որ սերտիւ կապւած էր «Երի-
տասարդ Թիւրքերի» կազմակերպութեան հետ,
որի ձեռքումն էր գանւում այն ժամանակ, ինչ-
պէս և այժմ, պետութեան կառավարութեան
զեկը:

«Երիտասարդ Թիւրքերի» կառավարութեանը
յարելով և նրանց նսիրւելով՝ «Հայ Յեղափոխա-
կան Դաշնակցութիւնը», թող ներփա ասել, հայ
ցեղին յատուկ քաղաքական տհասութեամբ ու
թեթևամտութեամբ, չկարողացաւ զերահասու
լինելու և ըմբռնելու երիտասարդ Թիւրքերի
ներքինը, ոգին: Նոյն իսկ Աղանայի 20,000

* Այս գրքոյիկ հայկական հարցի եօթներորդ շրջանի շաբանակութիւնն է, որ գրաքննիչը տպագրելու արգելած էր:
Հեղինակ.

հայերի ջարդն՝ «Դաշնակցութեան» աչքերը չը-
բացեց, և նրանք Աղանայի ջարդերն բացառա-
պէս Օսմանեան հին սերնդի, կամ Արդիւլ Հա-
մբդականների գործն համարելով՝ շարունակեցին,
ըստ, առաջնոյն իրենց մտերմութիւնը երիտա-
սարդ թիւրքերի կառավարութեան հետ:

Եւ ահա այդ մտերմութեան հետեւանքն էր,
որ նախքան Ռուսիային պատերազմ յայտնելն,
Էնվէր փաշան պատգամաւորներ ուղարկեց նախ
էրդրում և ապա Վան ու Մուշ Դաշնակցութեան
հետ բանակցելու՝ նրան իր կողմը զրաւելու
ընդդէմ Ռուսիայի:

ԾՊ.

Պատգամաւորներն էին Նաջի բէյ, Հիլմի
բէյ և Շուքիր բէյ: Այս մարդկանց հետ բանակ-
ցելու համար՝ դաշնակցութեան կողմից նշանակ-
ւած էին Ակնունի և Բ... ոռուսահայ դաշնակցա-
կաններն, և Վռամեան տաճկահայ դաշնակցա-
կանը:

Թուրք պատգամաւորները յայտնելով, որ
Ռուսիային պատերազմ յայտնելն իրանց մէջ
արդէն ծրագրւած է, — ինդրեցին որ «Դաշնակ-
ցութիւնը միանայ իրենց հետ ընդդէմ Ռուսիոյ,
և եթէ կարող է, նոյն իսկ կովկասահայերին
Ռուսիայի դէմ հանէ *): Փոխարէնը խոստանում

*) Մի այդպիսի ծրագիր ընդդէմ Ռուսաստանի
1863 թւին կազմած էր Ֆրանսիայի կայսրը՝ Նապօ-
լէն Ալբու, որ նոյն թւականում տեղի ունեցող Լենա-

էին, — կովկասը նւաճելու գէպքում. — հայերին
տալ Կարսը, Երևանի նահանգը, Գանձակի նահան-
գի հայաբնակ մասը, Վանը, Բիթլիսը և Էրզրու-
մի վիլայեթի մի մասը, և այս երկիրներից մի
փոքրիկ ինքնավար իշխանութիւն կազմել Օսման-
եան պետութեան հովանաւորութեան ներքոյ:

Կան ապստամբական շարժումների դրդիչն ու պաշտ-
պանն էր: — Նախունի խորհրդով լիճ յայտնի իշխան
Զառտօրիսկին «Պօլոյ մէջ խումբ մը մարդիկ զինուով՝
Բարձր Հայաստան պիտի երթար: Ընթե այս պղտի
խումբն հայ ու բիւրտ քաջամարտիկներով պիտի զօ-
րացնէր և անմիջապէս Ռուսիոյ Հայաստանն ու Վրաս-
տանն արշաւէր: Յեաոյ այդ գաւառներուն բնակչաց
սիրտն իրեն գրաւել, որով ընդհանուր յեղափոխութիւն
մը աեղի տալով՝ Ռուսիոյ Լենաստանի վրայ թափած
սոսկալի հուրն տկարացնել, ստիպելով զէնքն իւր
զօրացը մէկ մեծ մասն հոն վերագրածնելու»: (Դիւան
Հայոց պատմութեան, Գիրք ԺԴ. էջ 55):

Դիւանի այս հատորը հրատարակից «Ազգային
Բիւրօն», իրեն ապացոյց «Տաճկահայաստանի հարստա-
հարութիւններ»-ին, Եւ դաշնակցական գործիչներն,
տեղի և անտեղի կերպով, սկսեցին այդ հատորից հա-
նած այս ու այն կաորը՝ ինչպէս լրագրութիւնում,
նմանապէս և ժողովներում, — շահագործել յարդարա-
ցումն իրանց արկածախնդրական գործողութիւններին:

Մենք այդ գործիչների վրայ չենք զարմանում,
քայլ զարմանալով զարմանում ենք արժ. հրատարակչի,
տպարանատէր Գիւտ ա. քահ. Աղանեանցի «Երկու
Խօսք»-ի մաստանդ այն տողերի վրայ, որոցմով Պ.
Նորատունկեանի զրածի իմաստը փոխել է: Ինչպէս
որ փոխել է նա և Պ. Նորատունկեանի այն բառերն,
որ նա զրում է Սրուանձտեանին թէ՝ «այն համոզումը
ունիմ որ լաւ քաղաքականութեան հետեւած չենք ըլլար
անդադար քրդաց դէմ գանգատելով ու մեզ շարունակ
անոնց յարաբերութիւնն հեռու պահելով, Քրդերը
մարմին մը կը կազմեն ցեղով ու զէնքով, հայքս ալ

Բայց եթէ, — ասել էին թուրք պատգամաւորները, — Դաշնակցութիւնը Ռուսիային կովկասահայերի դէմ զրգուելուց երկիւղ է կրում, — յայնդէպս մենք մեր առաջարկի վրայ չենք պնդում: Բայց պահանջելով պահանջում և պընդելով պնդում ենք, որ դուք դաշնակցականներդ, ինչպէս և առհասարակ տաճկահայերն, գոնէ այս անգամ լոյալ, չէզօք մնաք: — Եւ եթէ այդպէս կը մնաք, ձեր մնագին անգամ ձեռք տուղ չի լինիլ: Եթէ այս երկիրն մեր ձեռին մնաց, դուք մեր հպատակներ կը մնաք դարձեալ, իսկ եթէ ոռւսների ձեռք անցաւ, — Նրանց հպատակը կը դառնաք: Բայց եթէ այս անգամ կո չէզօք չմնացիք և դարձեալ ձեռնարկեցիք ձեր ոռւսամոլ վարմունքն ու արարմունքը, — ապա հաստատ իմացած կացէք, որ այլ եւս տաճկահայ չի մնալ Օսմաննան աշխարհում: — Ինչպէս որ ցորենը ջրադացի քարերի մէջ արորելով՝ փոշու է վերածում, — այսպէս մենք էլ տաճկահայերին իսպառ կը ջնջենք, կը փոշիացնենք: — Եւ այս կանենք

ազգաւ և լոյսով. պէտք է որ իբրարու բաղիսէ առաջ իմաստասիրենք այն օգուտները, որ կարելի է քաղել նոյն հաղորդակցութիւնն ու միաբանութիւնն. եւրոպական իրաւագիտութիւնը կը պատւէ նախ զէնք ի ծեռին, եւ ապա լաւ լրաւարեալը»: Ըսդգծած վերջին բառերն հայր Աղանեանցը իր «Երկու Խօսք»-ի մէջ դուրս է բերել իբրև հեղինակաւոր անձի վկայութիւն դաշնակցականների արկածախնդրութիւնը արդարացնելու համար: — Մինչդեռ Նորատունկեանը բոլորովին այլ կարծիք է յայտնում:

այն հեռաւոր նպատակաւ, որ եթէ Ռուսիան յաջողի, թերեւս, Տաճկահայամանին աէր դառնալով՝ կցել իր կովկասեան սահմաններին, — այն ժամանակ մենք վտանգաւոր ենք համարում, որ կովկասի և Փոքր Սսիայի մահմեղական միապաղադ տարրի մէջ տեղում դուք, հայերդ, շարունակէք դարձեալ ձեր գոյութիւնը: Դա մեր քաղաքական հեռաւոր նպատակին շատ մեծ խոչընդուն է *):

✓ ծԴ.

Թիւրք պատգամաւորների այս պարզ և դրական առաջարկներին՝ դաշնակցականները մէկ պատասխան միայն ունեին տալու, — կամ Նրանք պէտք է միանային թուրքերի առաջարկութեանը և կամ չէզօքութիւն յանձն առնեին: — Բայց Նրանք դեռ այդ չարին: — Նրանք դեռ իրենց խելքին զոր տւին՝ թուրք դիպլոմատիային խելք սովորեցնելու: Եւ, ըստ առածին, մի ձեռքով կամմեցան երկու ձմերուկ վերցնել: Հայ յեղափոխականներն կամմեցան ոռւսին էլ հաճոյ լինել, թիւրքին էլ: Նրանք խորհուրդ տւին թիւրքերին՝ «Հընկնել եւրոպական պատերազմի հոսանքի մէջ,

*) »Հորիզոն»-ը (1915 թ. № 291) և «Ալբե»-ը (1915 թ. 208) թուրք պատգամաւորների և «Դաշնակցութեան» ներկայացուցիչների բանակցութիւնը միակողմանիութեամբ են դուրս բերել ու կբաժանել. Նրանք մի խօսքով անդամ չեն յիշում թիւրք պատգամաւորների վերջին առաջարկն ու սպառնանքը:

որովհետև դա վտանգաւոր արկածախնդրութիւնն է և Թիւրքիային դէպի կործանումը կը տանէ»*):

— «Մենք մեր անելիքի մասին չենք եկել ձեզ հետ խորհրդակցելու, — վրդոված պատասխանում են Թիւրքերը, — այլ ձեր անելիքի մասին: Եւ սպասում ենք ձեր այս կամ ոչ պատասխանույն, դուք կամ մեզ հետ միացեք, կամ չէզօք, լոյալ մնացեք»:

— «Հայերը կը կառարեն իրենց քաղաքացիական պարտքը երկու պատերազմող պետութիւնների մէջ», — այս եղաւ զաշնակցականների պատասխանը, որով ուզեցին ասել թէ հայերը իրենց վրայ իշխող պետութիւններին չեն գաւաճանիլ:

Հազիւ թէ զաշնակցականների այս պատասխանը, նա մանաւանդ նրա անկեղծ լինելը, վրատանութիւն և հաւատ ներշնչէր Թիւրքերի մէջ, որոնք շատ լաւ ճանաչում էին «մեզ (հայերին) որ ամէն ժամանակ և ամէն պարագայի մէջ, ուղղակի թէ անուղղակի, եւրոպային կոթնած բռունցք շարժած էինք մեր մոնղութիւնութիւնը դէմ: Եւրոպական իրապաշտ, անբարոյական քաղաքականութեան դէմ շատ թուղթ մը ըստած և բանախօսութիւններով օդը աղմկած էինք:

Խօսքը Դաշնակցութեան վրայ մասնաւորելով, պէտք է ասել, որ երիտասարդ Թիւրքերի կառավարութեան և Դաշնակցութեան համերաշ-

խութեան միակ հետևանքը այն եղաւ, որ «Դաշնակցութիւնը մի քանի զուտ կուսակցական խնդիրներու մէջ շահեցաւ, յաջողեցաւ պարլամենտական ընտրութիւններու միջոցին իր թեկնածուները անցնել տալ, յաջողեցաւ ինքզինքը պահպանել կառավարական հալածանքներէ և սակայն այդքան միայն: Զեռք չառնեցաւ այնպիսի մի գործելակերպ, որ համապատասխան ըլլար կնքւած համաձայնութեանը»:

Սկզբէն իսկ անկեղծութիւն, քաղաքականութեան մէջ անհրաժեշտ եղող վճռական հետեւողականութիւն գոյութիւն չունեցաւ այս համերաշխութեան մէջ:

Դաշնակցութիւնը, և իրմով հայը, միշտ ալ մնաց կասկածելի թիւրքերու աչքին, միշտ լսային, որովհետև ինչ որ ստորագրած էր Դաշնակցութիւնը հետեւելով իր մտքին, կը հերքէր՝ հետեւելով իր զգացումներուն: Մէկ ձեռքով շնածը՝ միւս ձեռքով կը քանդէր: Ոչ մէկ մերձեցում կը փորձէր թիւրք մասսային, ընդհակառակ կը շարունակէր գրգռիչ ցուցամոլութիւնները և այն ներքին տառելութիւնը, որ հակառակ իր ծածկուած ըլլալուն, կը խօսի տւելի պերճախոս կերպով, քան բացէ ի բաց արտասանւած խօսքերը, որ ծածկուած թարախի պէս անկարելի կը դարձնէ վերքին բուժումը»*):

*.) «Վան-Տոսպ» 1915 թ. № 2. Եթէ մեր մէջ, դժբաղտաբար, տակաւին կան մարդիկ, որ «Դաշնակցութեան» ինչ լինեն, և ինչ ու որքան չարիք ազգին

Այսպէս էր ահա զրութիւնը երիտասարդ թիւրքերի կառավարութեան և Դաշնակցութեան մէջ՝ երբ նրանց ներկայացուցիչները երգումում և Վանում ու Մուշում օգոստոսին բանակցում էին միմիանց հետ՝ թէ թիւրքուս պատերազմն ծագելիս՝ ինչ դիրք պէտք է բռնեն հայերը:

ԾԵ.

Մինչդեռ երիտասարդ թիւրքերի կառավարութիւնը Տաճկաստանում եղող դաշնակցական-

հասցնելն չդիտեն, — այդպիսիներին մենք հրաւիրում ենք ուշի ուշով կարդալու «Վան-Տոսպ»-ի և 2-ից սկսեալ տպագրւած Մ. Արծրունի ստորագրութիւնը կրող «Փախստականի նամակներ»-ի շարքը համոզւելու համար, որ «Դաշնակցութիւնը» անկախ այն ամէնանբարոյականացնող երեսոյթներից, որ մտցրեց հայկեանքի մէջ, անկախ այն ահազին գումարներից, որ նա ամէն մի աններելի միջոցներով գոփեց, զջեց ազգից իբրև թէ աղգին փրկելու համար «երրէք չէ կարողացած զոյացնել մի այնպիսի ուժ, որին կարելի լինէր կոթնիլ վտանգի օրերուն, կամ որ կարող ըլլար թշնամիին հասցնել ծանր հարւածներ։ Դաշնակցութիւնը իր գործունէութիւնը դարձուցած է դէպի ներսը, իր ուժը զգացնել տւած է ծանրէն հայ կհանքին մէջ, Բայց արտաքին պայմաններու դէմ նա եղած է միշտ տկար, միշտ անյաջող, միշտ պարտւած։ Նա կարծես գործած է գործելու համար միայն և ոչ թէ արդիւնք մը ձեռք բերելու համար։ Կոթնած իր այդ չնչին ուժերուն, Դաշնակցութիւնը կը բռնէր չափազանց զրոգոիչ դիրք մահմէտական ամբոխին և կառավարութեան հանդէպ։ (Նոյնը և 8):

— Հնց այդ միակ նպատակաւ էլ կաղմակերպւած է Դաշնակցութիւնը, — կաւելացնենք մենք։

Ների հետ բանակցում էր նրանց իր կողմը որպալու համար, — Կովկասի հայութիւնը վաղուց իվեր հակառակ տրամադրւած էր դէպի Տաճկաստանը ոգեգորելով և խրախուսւելով ոռւս և ռուսահայ թերթերի զրգուղական լուրերով ու յօդւածներով, Օլգինի և Պլէտնեովի դասախոսութիւններով և հայոց հոգեոր Բարձրագոյն իշխանութեան յորդուներով, որոնք մի կողմից լաւ հող պատրաստեցին ոռւսական գիպլօմատիայի համար՝ հայկական հարցն ի պաշտօնէ զարթեցնելու և արծարծելու, և միւս կողմից Կովկասահայ ժողովրդին տրամադրելու, որ, ի պահանջել հարկին, պատրաստ լինի իր հակաթիւրքական զգացմունքներն գործնականօրէն արտայայտելու և ի հանդէս բերելու։

Վերջին նպատակին ձգտում էր մասնաւորապէս փոխարքայ կոմս Վօրօնցով-Դաշկովը և նէնց զրա համար էլ վազորով դաշնակցական գործիչներին իրենց աքսորավայրերից վերադարձնել էր տւած իբրեւ թէ ի հետևումն վեհափառ հայրապետի միջնորդութեանն և եթ։

Այսպէս թէ այսպէս՝ աքսորավայրերից վերադարձած դաշնակցականներն պէտք է որ մի կերպ իրանց երախտագիտութիւնը ցոյց տային կովկասեան փոխարքային։ Եւ նրանք չթերացան իրենց այդ պարտքն կատարելուց։

Այս էր ահա պատճառն, որ երբ Նորին Պայծառափայլութիւնը ցանկութիւն յայտնեց, որ

որ հայերը իրենց սեպհական միջոցներով կամաւորական հայ յատուկ խմբեր մէջ բերին՝ թիւրքաց և ռուսաց մէջ պատերազմ բացւելու դէպքում, — դաշնակցականներն մեծ սիրով ընդառաջեցին կոմսի այդ ցանկութեանը։ Եւ ահա առաջ եկաւ «Աղգային Բիւրօ» կազմելու անհրաժեշտութիւնը։
Եւ Բիւրօն ձեռաց կազմւեցաւ։

ԾԶ.

Այդ Բիւրօյի ներկայացուցիչներն եղան վրաստանի և Խմերեթի Հայոց թեմակալ առաջնորդ Մեսրոբ Եպիսոպոս Տէր-Մովսիսեանցը, Թիֆլիսի քաղաքագլուխ Աղէքսանդր Խատիսեանցը Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան նախագահ Սամսոն Յարութիւնեանցը և 10 տարուց ի վեր Տաճկահայաստանում գործող, յայտնի դաշնակցական բժիշկ Յակոբ Զաւրիեվը*):

Դրանցից առաջին երեքը գրամ և զինւորացուներ պիտի հաւաքէին կամաւորական խմբեր կազմակերպելու համար, իսկ վերջինը՝ այդ խրմբերին գէպի՝ Տաճկահայաստան առաջնորդելու, նրանց համար խմբագետներ ջոկելու և սրանց ու ոռւս զինւորական իշխանութեան մէջ միջ-

*) Եւ որ, — ինչպէս տեսանք, — 1912 թւականում զեսպան Գիրսից հրահանդ էր ստանում Տաճկահայաստանում գործելու, (Տես «Հայերի աղատազր, շարժ.» մասն Ա. Էջ 518):

նորդ հանդիսանալու, — մի խօսքով մի տեսակ հայ զինւորական մինիստր։

Ծրագրելով և կազմակերպելով «Ազգային Բիւրօն» դուքս Վօրօնցով-Դաշկովը՝ այնու ամենայնիւ՝ ընաւ չուզեց նրա գոյութիւնը ճանաչել ի պաշտօնէ։

Մինչև անգամ երբ վերսյիշեալ անձինք, — իրանց ոտքի տակ որևէ է հող ունենալու նպատակաւ՝ խնդրեցին դուքսին, որ իրանց իրաւունք տրւի հայ ժողովրդից ընդհանուր կամ մասնաւոր ժողով գումարելով՝ իրենց ընտրութիւնը հաստատել կամ վաւերացնել տալու, — Նորին Պայծառափայլութիւնը մերժեց այդ առաջարկն և՝ յարակցելով միաժամանակ որ ինքը արգելվ չի լինի, եթէ Բիւրօն ինքն իր պատասխանաւութեամբ և մասնաւոր կերպով այդպիսի ժողովներ գումարէ, և մինչև անգամ Թիֆլիսից դուրս էլ ճիւղեր ունենայ ըստ իւր բարեհայեցողութեան։
Եւ այդպէս էլ արաւ «Ազգային Բիւրօն», որ այնուհետեւ իր տիտղոսի վրայ աւելացըեց «կենտրոնական կամ գլխաւոր» մակդիրը։

Ծէ.

Թիֆլիսի և նրանից օրինակ վերցրած միւս քաղաքների հայերի մէջ տեղի ունեցող այս շարժումների լուրը՝ շատ անհաճոյ տպաւորութիւն գործեց Պետրոգրադի կառավարչական բարձր շրջանների վրայ։

Ռուսիան ընաւ չէր ցանկանում որևէ առիթ

տալ մահմէդական տարրին վշտացնելու, գրգռեալու ինչպէս իր սահմաններում, նմանապէս և իր սահմաններից դուրս:

Այդ պահանջում էին Ռուսիայի իրան շահներն, այդ պահանջում էին, և առաւելապէս, նրա դաշնակից Անդրիայի շահներն:

Այս այսպէս լինելով՝ Կովկասահայերի շարժումներն՝ վտանգի կարող էին ենթարկել Ռուսիային և նրա դաշնակից Անդրիային: Էլ չենք խօսում այն մասին, որ եթէ հայերի շարժման ի պատասխան՝ Կովկասի մահմէդական տարրն ևս շարժեր, ոտքի կանգներ, Կովկասում անխուսափելի էին դառնալու զանազան բարդութիւններ:

Այս՝ և մի երկու այլ շարժառիթներից (որոց պարզելու տեղն ու ժամանակը չէ) դրդւած՝ արտաքին գործերի մինիստր Սազօնովը՝ Կովկասուղարկեց Պետական Դումայի հայադրի անդամ Աջէմեանին, որպէս զի Թիֆլիս հասնելով՝ համոզէ իր ազգակիցներին անյապաղ վերջ տալու իրենց քաղաքական շարժումներին, նախազգուշացնելով, որ ոռւս կառավարութիւնը հրաժարւում է որ և իցէ կերպով օգնելու նրանց, եթէ Կովկասի մահմէդական տարրը՝ յարձակում գործելու լինի նրանց վրայ:

ԾԼ.

Թիֆլիս հասնելով՝ Աջէմեանը Վազգային Բիւրօնին յայտնեց Սազօնովի առաջարկը: Մեսրոպ

Եպիսկոպոսն ու իր ընկերներն, ամենայն պարզութեամբ, յայտնեցին, որ իրանք գործի են ձեռնարկել ըստ ամենայնի՝ Փոխարքայի պահանջմամբն ու հրահանգով: Եւ պատրաստ են ամէն ինչ լեկվիդացիայի ենթարկել իսկոյն, եթէ դուքս Վօրօնցով՝ Դաշկովը կը կամենայ, ինչպէս որ այդ կամենում է Սազօնով մինիստրը:

Առաջնորդարանից դուքս գալով՝ Աջէմեանը տեսնւեցաւ զինորական և քաղաքացիական մասերի Փոխարքայի օգնականների հետ հաղորդելով նրանց Սազօնովի առաջարկը և ՇԱզգային Բիւրօնի պատասխանը:

Թէ գեներալ Միշլայեվսկին և թէ Պետերսոնը պատասխաննեցին Աջէմեանին, որ իրանք ևս նոյն կարծիքն ունին հայերի շարժման մասին, ինչ կարծիք որ ունի Սազօնովը:

Բայց որովհետեւ դուքս Վօրօնցով՝ Դաշկովը այլ հայեացք ունի և իր այդ հայեացքի իրագործելն է թելաղբում հայերին, — ուստի իրանք իրանց սեպուհ պարտականութիւնն են համարում՝ համակերպիլ իրանց անմիջական մեծաւորին — Փոխարքային:

Երբ Աջէմեանը Փոխարքային իրեն ներկայացաւ պալատում՝ Նորին Պայծառափայլութունը յայտնեց, որ, արդարեւ, հայերի շարժումը իր կամքովն ու թոյլաւութեամբն է կատարում: Որ այդ շարժման և նրանից առաջանալի հետևանքների մասին՝ պատասխանատւութիւնը նա ինքն

Իր վրայ է ստանձնում: Եւ թէ՝ այդ մասին նաև
անյապաղ կը գրէ Սաղօնովին ինչ որ հարկն է:

Աջէմեանը իրեն արւած յանձնարարութիւ-
նը վերջացած համարելով՝ վերադարձաւ Պետրօ-
դրադ*):

Ծթ.

1914 թ. հոկտեմբերի 20-ին հրատարակւե-
ցաւ ոռւս-տաճկական պատերազմը և հետեւեալ
օրը ազգիս վեհափառ հայրապետը, Կովկասեան
Փոխարքայի միջոցաւ, փութաց հեռազերով ն. Կ.
Մեծութեանը յայտնել իր և իր հօտի, հայ ազ-
գի հաւատարիմ հպատակութեան զգացմունք-
ները, մաղթելով «փառաւոր յաղթութիւն ոռւ-
սաց փառապանծ զօրքին ի փառս մեծին Ռու-
սաստանի»: («Արարատ» 1914 թ., հոկտ.):

Ռուս և ոռւսահայ թերթերն այս պատե-
րազմը հոչակեցին տաճկահայութեան վերջնա-
կան ազատութեան միջոց և յորդորեցին ոռւսա-
հայութեանը ոչ մի զոհաբերութեան առաջ կանգ
չառնել ոռւսաց բանակի յաղթանակման հա-
մար**):

*) Սյո ամբողջ պատմութիւնը մենք լսել ենք
պ. Աջէմեանից՝ իրանից 1914 թ. հոկտեմբերի 17-ին
Բագրում պ. Տիգրան Բուզաղեանի տանը, ուր բաւա-
կանաչափ ինտելենգ հայեր էին ժողովւած Աջէմեանի
նախընթաց խնդրանոք:

**) Աւետիս Ահարոնեանն էլ «Ժընեվի Ժուրնալ»
Ն.-ում հրատարակեց իր մի կրակոտ յօդւածը, որի
մէջ, յանուն հայութեան, կրակ ու սպառնանք էր կար-
դում Օսմանեան կառավարութեանը:

Յիշեալ թերթերին ձայնակցութեան ժամկետնի
«Արարատ»-ը որ իր «Յարութեան ժամը» յօդ-
ւածում գտնում էր «շատ բնական՝ որ այսպիսի
(տաճիկ) պետութեան դէմ ոտքի կը կանգնեն
ոչ միայն հպատակները՝ թօթափելու իրենց
անարժան պետութեան բոնակալ լուծը, այլ նոյն
իսկ իւր ժողովուրդն անզամ»:

Ապա մէջ բերելով Ն. Մեծութեան թագա-
ւոր կայսեր հրովարտակի այն խօսքերն թէ՝
«Թիւրքիայի ներկայ անմիտ միջամտութիւնը
պատերազմական գործողութիւններին՝ միայն կը
փութացնի իրեն համար ճակատագրական անց-
քերի ընթացքը և Ռուսաստանի համար ճանա-
պարհ կը բանայ լուծելու նախնիքներից իրեն
աւանդուած խնդիրները Սև ծովի ափերում», ևս
և Անգլիայի նախարարապետ Ասկվիտի հոկտեմ-
բերի 17-ին Հիլդ-Հոլլում արտասանած այն խօս-
քերն թէ՝ «Անգլիան սուրը պատեանի մէջ չի
գնիլ, մինչեւ որ չհնչւեն թազման զանգերը տաճ-
կական տիրապետութեան՝ ոչ միայն եւրոպա-
յում, այլ նոյն իսկ Տաճկաստանի Ասիական եր-
կիրների մէջ, որովհետեւ տաճկական կառավա-
րութիւնն ինքնասպանութիւնն է գործել և սեպ-
հական ձեռքերով փորել փոր գերեզմանը»: Ապա
աւելացնելով որ «Փրանսիական կառավարու-
թիւնն էլ լիակատար համակարծիք է այդ վճիռ-
ներին», — «Արարատ»-ը հանդիսաւորապէս յայ-
տարարում է որ Տաճկաստանի բազմատանջ
հայր և առհասարակ նորա այլ քրիստոնեայ հպա-

տակները վաղուց սպասում էին այդ երեք ուժեղ պետութիւնների Տաճկաստանի համար կայացրած վերոյիշեալ ճակատագրական վճռները լուլու, որպէս զի արմատական ճանապարհով լուծուի իրենց դժբաղդ կեանքի «լինել ու չլինելու» հարցը»... «Հայ ժողովուրդը, — շարունակում է «Արարատ»-ը, — կանգնած է պատմական ճակատագրի առաջ, նա սպասում է ոռւսաց քաջամարտիկ զօրքի յաղթութեան և իւր պատմական յոյսերի իրականացման: Նրա գաւակները անձնւէր կերպով կռւում են ոռւս զօրքերի շարքում դարաւոր թշնամու դէմ: Ռուս-տաճկական կոփւը առաջ է բերել հայ ժողովրդի մէջ մեծ ոգեորութիւն բնականօրէն, ամէն տեղ մեծ չափերով օգնութիւն են ցոյց տալիս՝ ով ինչով կարող է: Զանազան կողմերից հայ անձնւէր կամաւորները սպասածից աւելի, շտապում են Տաճկատանի պատերազմի դաշտը միանալու և աշխացելու ոռւս զօրքին ընդդէմ թշնամու»:

— «Հայ ժողովրդի յուսալից կեանքի յարութեան ժամն է հասել, — աւետում էր «Արարատ», — աւելացնելով այդ բառերի վրայ, որ ներկայ պատերազմից յետոյ՝ «հայ կեանքը կը վերածնի և ամենքս ուրախութեան արցունքներով ցողուած միմիանց հետ բազմատանջ ժողովրդի կեանքի յարութիւնը կաւետենք»*):

*) «Արարատ» 1914 թ., նոյեմբերի Մայր Աթոռի օրդանի այս լաւատեսութիւնը չունէր Եղնիկ ա. քահ. Երգնկեանցի «Հովիտ»-ը: Վերջինս բացարձակ յոռետես

Կ.

Պատերազմը պաշտօնապէս յայտարարւելուց մօտ երկու ամիս առաջ՝ «Ազգային Բիւրօի» վերոյիշեալ չորս անդամները Փոխարքայի պալատը հրաւիրւեցան խորհրդակցութեան համար:

Կառավարութեան կողմից ներկայ էին՝ Փոխարքայի օգնականներն՝ գեներալ Մելանգակի, հօֆմէյստեր Պետերսօն, Կովկասեան Զինւորական Շրջանի մեծաւորը և գեներալ Իւգենիչը:

Ժողովը առաջարկեց «Ազգային Բիւրօ»-ին կազմակերպել ուազմիկ յատուկ խմբեր, որոնք փորձառու խմբապետների ղեկավարութեամբ պէտք է գտնւէին Կովկասեան բանակի այն զօրամասերի մօտ, որ 4 կողմից գրոհ էին տալու թշնամու վրայ: — Գրոհ տւող այդ զօրամասերի յարձակման կէտեր՝ ընտրւած էին առաւելապէս՝ հայաշատ վայրերն:

«Ազգային Բիւրօն» մեծ սիրով ընդառաջեց այդ առաջարկութեանը, միաժամանակ ցանկու-

էր տաճկահայերի ապագայի նկատմամբ: Եւ տակաւին 1912 թւականին, երբ ոռւսահայերիս մէջ արհեստականօրէն հակաթիւրք շարժումն սկսւեցաւ (ինչպէս որ մեր այս յօդւածների սկզբին զլուխներում ցոյց է տրւած), — «Հովիտ»-ը զդուշացրեց իր ընթերցողներին գրելով, որ այս քաղաքագիտական խաղերն «հայերի համար արեան, բաղնիսներ են դառնալու»: (Տես «Հովիտ» № 38): Այս շարժումներն «մեր գոյութեան վրայ սեւ ինաչ ղնելու պատրաստութիւնն է»: (Տես իմ «Պատմութեան դասեր» յօդւածը, «Հովիտ» 1912 թ. № 45):

թիւն յայտնեց, որ տաճկահայերը, հնարաւոր եղածին չափ, զինւեն իրանց անձին վտանգ սպառնացած ժամանակ պաշտպանւելու համար: Այս խնդիրը վերջերում էլ՝ քանից կրկնեց «Ազգային Բիւրօն»: Բացի դրանից նա խնդրեց, որ ուսւ դիպլոմատիան նախապէս ձեռք բերէ չէզօք պետութիւնների յօժարութիւնը, որով նրանց դեսպաններն ազդեն թիւրքիայի վրայ՝ խուսափելու հայերի մէջ ջարդ առաջացնելուց:

Ինչպէս որ կառավարութեան ներկայացուցիչներն առաջարկել էին՝ «Ազգային Բիւրօն» 1914 թ. սեպտեմբերի սկզբներին ձեռնարկեց խմբերի կաղմակերպման գործին, որպիսի գործը վարում էր մի առանձին կօմիտետ, բաղկացած, գրեթէ բացառապէս, դաշնակցականներից, որոնք մուսիս այլ և այլ քաղաքներում, նոյն իսկ արտասահմանեան երկիրներում, իրենց ունեցած գործականների կամ ներկայացուցիչների միջոցաւ, յաջողեցան մեծ ոգեսորութիւն առաջ բերել ամենուրէք հայ ժողովրդի մէջ և կամաւոր զինւորացուներ ճարել առաւելապէս տաճկահայերից^{*)}):

Դաշնակցական գործականներին՝ ժողովրդին՝ ոգեսորեցնելու գործում՝ մեծապէս նպաստում էր նա մանաւանդ կովկասեան հայ մամուլը: Այսպէս որ պահանջւած չորս հայկական կամաւորական խմբերն՝ հոկտեմբերի երկրորդ կիսին, այն է ոռուս-տաճկական պատերազմն յայտնելուց մէ-

քանի օր առաջ՝ կազմ և պատրաստ էր արդէն: Եւ երբ հոկտեմբերի 20-ին պատերազմը հրատարակւեցաւ՝ հայկական խմբերն՝ ոռուսական բանակի որոշեալ զօրամասերի հետ միասին՝ առաջ շարժեցան:

ԿԱ.

Կամաւորական խմբերի առաջինը կազմւած էր 1,200 հոգուց, երկրորդը՝ 382, երրորդը՝ 430 և չորրորդը՝ 470,— բացի դրանից պահեստի զինւորներ ունէր, «Ազգային Բիւրօն» 600 հոգի: Ընդամենը, ուրեմն, 3,082 հոգի:

Առաջին խմբի պետն էր Անդրանիկը, որ հոկտեմբերի 23-ին Զուլֆայից անցաւ Խօյ:

Անդրանիկը տաճկահպատակ է:

Երկրորդ խմբապետը Դրօն էր, ոռուսահպատակ, որ հոկտեմբերի 24-ին իգդիրից անցաւ Թուփարեզի լեռնանցքը:

Երրորդ խմբապետն էր Համազասպը, տաճկահպատակ, որ նոյեմբերի 1-ին Ալաշկերտի հովիտը մտաւ:

Վերջապէս չորրորդ խմբապետն էր Քեռին, որ Սարիղամիշից մտաւ Հախվերան և Խօշար:

Այս չորս խմբերն էլ սրբութեամբ կատարելով իրենց վրայ դրւած այլ և այլ զինւորական պարտականութիւնները՝ միշտ գովեստի և շնորհակալութեան են արժանացել ոռուս զօրապետների կողմից թէ բանաւոր և թէ զբաւոր կերպով:

^{*)} Որոնք մօա 90% էին կազմում խմբերում:

Դժբաղդաբար երկրորդ խմբի պետ Դրօն հոկտեմբերի 25-ին երկու օր տևող ճակատամարտում վիրաւորւելով՝ ստիպւեցաւ պատերազմի դաշտից հեռանալ շուտով։ Սակայն իսկոյն նրան փոխարինեց Արմեն-Կարօն, (Բաստրմածեան), որ տաճկահպատակ էր և Օսմանեան պառլամենտի անդամը էրզրումի կողմից։

Առաջին երկու ամիսներում՝ չորս կամաւորական խմբերն հետևեալ կորուստն ունեցան՝ 156 սպանուած և 743 վիրաւորւած, հիւանդ և ցրտահար։ Այսպիսով խմբերի կազմը $\frac{1}{3}$ մասով պակասեց պատերազմի հէնց առաջին շրջանում։

ԿԲ.

Այս ցաւալի հանգամանքը պարզեց կամաւորական խմբերի որոշ անփորձութիւնը, ուստի և ոռւս զօրավարների ցանկութեամբ, որոց ձեռքի տակ նրանք գործում էին, որոշւեցաւ պակասած զինւորների թիւն լրացրել և նոր կազմակերպութիւն մտցնել։ Իսկ մինչ այդ՝ կամաւորական խմբերին յատկացւեցաւ ոռւսաց ձեռքն անցած վայրերից փախած հայերին՝ իրանց պաշտպանութեան տակ՝ տեղափոխել դէպի կովկաս, եւ նրանք այդպէս էլ արին։ Այսպէս՝ առաջին կամաւորական խումբը՝ Դիլմանի շրջանի հայերին տեղափոխեց, իսկ երկրորդ խումբը՝ Ալաշկերտի հովիտի հայերին։

Այդ միջոցներին էր ահա, որ գաղթել չցան-

կացող հայկական շատ գիւղեր անօգնական և անպաշտպան մնալով՝ մահմէդական տարրի կատաղի վրէժինդրութեանը ենթարկեցան՝ ոռւս ըանակին, և նամանաւանդ հայ կամաւորական խմբերին, ցոյց տւած համակրութեան և այս ու այն օգնութեանը համար։

Մինչ այս մինչ այն, և ահա «Ազգային Բիւրօն» յաջողեցաւ խմբերի պակասորդը լրացնել, նրանցից իւրաքանչիւրի թիւն հազար հոգու հասցնելով։

Բացի նախկիններից՝ մի նոր խումբ ևս աւելանալով՝ կամաւորական խմբերի թիւն եղաւ հինգ։

Բացի առաջին խմբից՝ մնացեալ չորս խմբերի վրայ ընդհանուր հրամանատար նշանակեցաւ Վարդանը և այդ միացեալ խմբերն՝ այնուհետեւ կոչւեցան «Արարատեան Դունդ», որի մննդեան և միւս ծախսերն, ըստ որոշման գուքս Վօրօնցով-Դաշկովի, կառավարութիւնը այնուհետեւ իր վրայ ընդունեց՝ զնդի գործունէութեան ծրագիրը Գերագոյն Ընդհանուր Հրամանատարի ձեռքով հաստատել տալուց յետոյ։

Թիչ ժամանակից յետոյ՝ կարիք զգացւեց մի նոր խումբ ևս կազմակերպելու։ Եւ կազմակերպւեցաւ բացառապէս «Հնչակեան» կուսակցութեան համախոներից, մինչդեռ նախկին հինգ խմբերն՝ «Դաշնակցականներ» էին։

Նոր խումբը կոչւեցաւ վեցերորդ խումբ՝ իրեն պետ ունենալով ոռւսական բանակի հայ-

ազգի օֆիցերներ՝ նախ կապիտան Զանփոլատովը
և ապա պօրուչիկ Ավշարովը:

Այս խումբը միացաւ գեներալ Բարատովի
բանակին և քաջութեամբ իր վրայ դրւած պար-
տականութիւններն կատարելով՝ նոյնպէս բանա-
ւոր և գրաւոր գովեստի արժանացաւ՝ վերոյիշեալ
գեներալի կողմից:

Խմբերից պակասածների թիւն, իր ժամա-
նակին, լրացնելու համար՝ «Ազգային Բիւրօն»
մի եօթներորդ, պահետի խումբ ևս կազմելու
ձեռնարկեց Երեանում:

Այս բոլոր խմբերի կազմակերպման և պահ-
պանման ծախքն եղած է 1,395,000 ըուբլի գրա-
մով և 400,000 ըուբլի շորեղէնով: Այդ գումարի
հաշւից՝ «Ազգային Բիւրօն» սկզբնական ծախքի
համար կառավարութիւնից ստացել է 245,000
ըուբլի: Իսկ մնացել 1,560,000 ըուբլին՝ հանդա-
նակել է հայ ժողովրդից *):

*) Դրամական այս հաշիւներն վերաբերում են
մինչև 1915 թ. հոկտեմբեր ամիսն: Բացի այս ռազմա-
կան գործունէութիւնից՝ «Ազգային Բիւրօն» ունեցաւ
նաև ճետախուզական (քայլութեամուսունական) գործունէութիւն:
Չորրորդ կօրպուսի մօտ նա ունէր հայկական մի խմբակ,
որ Դէվոյեանի ղեկավարութեամբ՝ բացի յայտնի ճետա-
խուզութիւններից՝ նա և զայտնի ճետախուզութիւն-
ներ էլ էր անում Թիւրքիայի խորքերում, և նոյնիսկ
էլ Պօլսում, և ճիշտ տեղեկութիւններ էր հաւաքում
Թիւրք բանակների քանակի, կազմութեան և շարժում-
ների, պաշարի, ռազմամթերքի, նաւատորմիզի մասին
և այլն:

ԿԳ.

Հայկական կամաւորական խմբերի կազմա-
կերպման լուրն՝ երբ առաջին անգամ Բ. Դուռը
լսեց ոչ միայն զարմացաւ, այլ նա և զայրացաւ
«Դաշնակցութեան» վրայ, իբրև իր խոստմանը,—
չէզօք մնալու նկատմամբ,—դրժողի:—Սակայն
չկամմենալով գրգռել նրանց՝ խնդրեցին հնար
գտնել՝ ոռուսահայերին յետ կանգնեցնելու իրանց
մտադրութիւնից: Առ այդ Դաշնակցութիւնը պա-
տասխանեց, որ նա ինքը «կարող չէ ոռասհայե-
րի գործողով մթիմների համար՝ երաշխատը ուժին
եւ պատասխանատութիմն ստանձնել»:

Շատ պարզ է, որ այսպիսի պատասխանը
չէր կարող թիւրք կառավարութեան առաջ՝ ար-
դար և չքմեղ ցոյց տալ Դաշնակցութեանը, որի
դեկավարների միջոցաւն էր, որ Կովկասում կա-
մաւորական խմբերն էին կազմւում ու կազմա-
կերպւում:

Այս ևս պէտք է ասել, որ կամաւորական
խմբերի մասին լուրերն՝ խիստ չափազանցեցրած
կերպով էին հասնում թիւրք կառավարութեան
ականջին: Այսպէս՝ այդ կառավարութիւնը կար-
ծում էր, որ Անդրանիկի խումբը կազմւած է
12,000 հոգուց: Ուստի և պահանջեցին Դաշնակ-
ցութիւնից՝ պատգամաւոր ուղարկել նրան Սալ-
մաստ, և առաջարկել, որ Թիւրքիայի վրայ չը-
յարձակւի:

Առ այդ էլ Դաշնակցութիւնը այս պատաս-

խանը տւեց թէ՝ «արդէն ուշ է եւ ինքը անզօր է ոռւսահայերի շարժումը յետս կասեցնել»:

Յանուն անկողմապահութեան պէտք է արձանագրենք այստեղ, որ Դաշնակցականների միջից այդ միջոցում դուրս եկան ոմանք, որոնք հակառակ էին կամաւորական խմբերի կազմակերպման գործին, և որոնք ինքնաբերաբար յանձն առան շրջել պատերազմի դաշտին մօտիկ գաընւող հայաշատ քաղաքներն ու գիւղերը՝ յայտարելու ժողովրդին՝ յետ կանգնել հակաթիւրք ցոյցերից և շարժումներից։ Այսպէս վարեցան, օրինակի համար, Վոամեանը և Իշխանը Սակայն թիւրք կառավարութիւնը՝ դրանց անկեղծութեանը ևս չհաւատալով՝ մտքումը դրեց պատժել ինչպէս Դաշնակցականներին, նմանապէս և նրանց ձեռքովն ու խելքովն ընթացող տաճկահայերին։ Բայց իր այդ մտադրութեան իրագործումը՝ թիւրք կառավարութիւնը յետաձգեց յարմար առիթի։

Այնպէս որ,—դրում է դաշնակցական յայտնի գործիչներից մէկը, —«մինչև՝ գեկտեմբեր ամիսը ընդհանուր առմամբ՝ Թիւրքաց Հայաստանում դրութիւնը հանգիստ էր»*):

ԿԴ.

Նախընթաց գլուխներից մէկում անւանեցինք այն յայտնի քրդերն, որոնք շատ կամ քիչ

*) «Արև» 1915 թ. № 208,

ժամանակ Թիֆլիսում ապրելով՝ սիրաշահւում էին կովկասեան բարձր իշխանութեան կողմից և նրա հրահանգներովն գործում Տաճկահայատանի իրենց ցեղակիցների մէջ տարիներից իվեր։

Այդ քրդերից ամենայայտնիներն էին Շէյխ Սըմկօն և Արդիւլ Ռէզաքը։

Օռաջինը կովկասեան իշխանութիւնից ստացել էր շքանշան և ստանում կանոնաւոր ամսաթոշակ։ Խոկ նրա աշխետը, մի քանի տարի շարունակ, ստանում էր զէնք^{*)}։

Երկրորդ յայտնի քիւրդ Արդիւլ Ռէզաքը՝ խոստացաւ քրդերին որսալ և Ռուսիոյ կողմը գրաւել։ Եւ դրա համար բաւականաչափ գումար ստանալով կառավարութիւնից՝ Մուստաֆա բէյի հետ անցաւ գնաց Բօտան՝ տեղական քրդերին տաճկաց գէմ ապստամբեցնելու նպատակաւ իրեն թէ, բայց չյաջողեցաւ։

Մուստաֆա բէյը, իր հերթում ուսւ կառավարութիւնից մի ընդարձակ գետին ստացաւ կարանի անունով՝ Մակուի յրջանում։ Ստացաւ նմանապէս և դրամ ու զէնք։ Եւ չնայած այդ ամենին՝ Մուստաֆա բէյն ևս՝ գեկտեմբեր ամսին՝ տաճկաց կողմն անցաւ Սըմքօյի նման և ուսւներից ստացած զէնքերով սկսեց ուսւներին և հայերին կոտորել։

*.) Չնայած այդ ամենին՝ երբ գեկտեմբերին ուսւները նահանջեցին՝ Սըմքօն թիւրքերի կողմն անցաւ և սկսեց հայերին կոտորել։ Վերջերում Սըմքօն զդաց և ուսւ իշխանութիւնը նրան ընդունեց։

Այդպէս վարւեցաւ և մի այլ քիւրդ ցեղապետ Աբգիւլ-Մէջիդ անունով։

ԿԵ.

Ուուս-տաճկական սահմանագլխի վրայ քիւրդ բէգական մի ընտանիք է ապրում, — Շամշադինով։

1877թ. պատերազմի ժամանակ՝ այդ ընտանիքի անդամներից մէկը, անունը Այդիպ-փաշա, ուուսաց կողմն անցաւ, բայց յետոյ դաւաճանեց։ Շամշադինովի ընտանիքի մի մասը այժմ Ռուսաստանումն է ապրում, միւս մասը՝ Տաճկաստանում։

Ուուսահպատակ Շամշադինովներից մէկը, պրապօքչիկ Համիտ բեգը՝ պատերազմի սկզբներում՝ ուուս զինւորական իշխանութեանը ներկայացրեց իր հօրեղքոր որդի, տաճկահպատակ Ռասուլ բէգին և ուրիշ քրդերի։ Սահմանագլխի պահպանութիւնը ուուս իշխանութիւնը նրան և նրա ընկերներին յանձնեց, որոնք խօստացան հետզհետէ իրենց կողմը գրաւել Համիդիէ կոչւած քիւրդ զօրքերի այս ու այն մասին, և կամ միւս այս ու այն քիւրդ ցեղին։

Սակայն՝ կամայ թէ ակամայ՝ իրենց խօստմունքներից ոչ մէկն էլ չկարողացան կատարել։ Նոյն իսկ նրանք չկամեցան իրենց ցեղակիցներին յետ կասեցնել հօգուվ, սրտով ուուսներին անձնատուր եղած հայ խաղաղ ժողովրդին կա-

տարելու ծրագրից, որ նրանք ի գործ դրին ամենայն դաժանութեամբ։

ԿԶ.

Մետալի միւս կողմը շուռ տանք։

Առաջին հայ կամաւորական խմբապետ Անդրանիկը՝ կռւի բռնւած ժամանակ չորս քիւրդ օֆիցեր էր գերի բռնել։ Դրանց անուններն են՝ Սաղիմ բէգ (Շամսիի աշխրեթից), Օսման բէգ (Մլանցեվ աշխրեթից), Հաջի-աղա Հիւսէին բէգ (Թակուր աշխրեթից) և Ջահանգիր-աղա, որ եզրի էր և անձամբ եկաւ անձնատուր եղաւ։

Անդրանիկը դրանց բոլորովին զինաթափարաւ և տարաւ գեներալ Նազարբէգովին յանձնեց, զեկուցաներով որ դրանք բոլորը համիդիէկական օֆիցերներն են և իրենց ձեռքի տակ՝ խոշոր ոյժեր (զինւորներ) ունեն։

Ըստ պահանջման Նազարբէգով գեներալի՝ գերիներն հարիւր չափ հրացան յանձնեցին, ասելով որ ուրիշ և աւելի գէնք չունին։

Անդրանիկի այն հաւաստիացումը թէ՝ պատերազմից առաջ դրանք թիւրք կառավարութիւնից 1,600 հրացան են ստացել և 3,000 էլ իրանք առաջւանից ունէին, — Նազարբէգովը չըյարգեց։

Այլ առ ժամանակ մի գերիներին իրեն մօտ պահելով՝ յետոյ ուղարկեց գեներալ Զեռնօզուբովին, որին հաւատացրին գերիները թէ իրանք

ոռւսաց դէմ բնաւ չեն մեղանչած, ուստի և
ազատ թողնւեցան *):

Զեռնօզուբովի նման դէպի քրդերը զիջող,
կամ բարեհաճ գտնւեցաւ նաև գեներալ նիկո-
լյակվը, որ հայերին ջարդող, նրանց տներն ու
տեղերը թալանող համզա բէգին, Ղասըմ բէգին,
Ալի բէգին և նրա եղբօրը՝ Թէմուր բէգին թոյ-
լատրեց ազատ և աներկիւդ ապրել Դիատինում՝
այս զաւառի ոռւսաց ձեռքն անցնելուց յետոյ:

Նոյն իսկ մի քանի բերդապետներ (կօմեն-
դանտ) վերադարձին քրդերին նրանց զէնքերը,
պարտաւորելով որ ոռւսաց զօրքն առաջ շարժե-
լիս՝ նրանք թիկունքում զինւած՝ պահպանեն
երկիրը:

Կէ.

Մի կողմից հայ կամաւորական խմբերի ոռւս
բանակներին միանալն առիթ բռնելով և գրգռու-
ւելով, և միւս կողմից ոռւս զինւորական իշխա-
նութեան թոյլ, մինչև իսկ բարեհաճ վերաբեր-
մունքից խրախուսւելով՝ քիւրդ ցեղապետներն
անարդել սկսեցին ջարդել հայերին:

Սարայի և Բաշկալայի շրջանում նրանք
մինչև տասն հազար մարդ սպանեցին գաղանա-

*) Վերադառնալով իրենց երկրը և թիւրք բա-
նակին հետ միանալով՝ յիշեալ քիւրդ օֆիցերները
Անդրանիկին վրէժը տեղական հայերից լուծեցին՝ ջար-
դելով վերին և ներքին Ալիուրէք, Աբգերիք, Հաստա-
թամբան և Սալախանա գիւղերն:

բարք Վրէժինդրութեան ոգւսկ տոգորւած նրանք
հայերին ողջողջ թաղում էին, այլում և խա-
չում: Քաղաքների հայ ժողովրդի կայքն ու գոյքը
խլեցին, իսկ գիւղերն քարուքանդ արին:

Թրդերի այս գործողութիւնների մէջ՝ ան-
տարակոյս թիւրք կառավարութեան մատը ևս
խառն էր: Բայց նա դեռ աշկարայ հրապարակ
չէր դուրս գալ, եւ իր գլխաւոր ուշադրութիւնը
դարձրել էր մի կողմից՝ պատերազմին մօտիկ
վայրերից՝ հայերին տեղահան անելով և երկրի
ներսերը քշելով, և միւս կողմից առ երեսս դաշ-
նակցականներին փայփայելով և նրանց մէջ երկ-
պառակութիւն ձգելով:

Ինձ համար պարզ չէ՝ արդեօք այդ փայ-
փայանքին թէ իսկական համոզմունքի տրդիւնքն
էր, որ դաշնակցական գործիչներից ոմանք, — և
յատկապէս Վռամեանն ու Իշխանը, — հակառակ
իրենց կուսակիցների կամքին ու հաճութեանը՝
ինքնաբերաբար յանձն տուան, ինչպէս առաջ էլ
յիշել ենք, շրջել այս ու այն վայրը և ժողովը-
դին ի չէզօքութիւն և ի կարգ հրաւիրելու: Բայց
դեռ տեղ չհասած՝ Իշխանն սպանուեցաւ ճանա-
պարհին՝ իսկ Վռամեանը նախ ձերբակալւեցաւ,
յետոյ էլ սպանուեցաւ:

Ինձ համար պարզ չէ դարձեալ այդ երկու
գործիչների սպանման շարժառիթը:

Դուցէ թիւրք կառավարութիւնը նրանց սպա-
նել տեց՝ անվստահ լինելով նրանց անկեղծու-
թեան վրայ, և երկիւդ կըելով որ նրանք թերես

շըջելու են առաւել ևս հայ ժողովրդին գրդոելու
և լարելու:

Բայց գուցէ դիտմամբ սպանել տւեց, որ-
պէս զի Վանի մէջ,—ուր սպանւածները մեծ
ժողովրդականութիւն էին վայելումնոր սերունդին
մէջ,—զրգոչութիւն և ապստամբութիւն առաջ
բերելով յարմար առիթ ունենայ՝ արձակ հա-
մարձակ կոտորել վանեցիներին, որոնք երկար-
տարիներից ի վեր կասկածելի և ատելի էին
կառավարութեան աշքում գլխաւորապէս իրանց
ուռւսախրութեան և թեթևամիտ ցոյցերի համար*)։

*) 1872 թ. մարտի 3-ին 40 հոգի վանեցիներ,—
ըստ երեսթին արհեստաւորներ,—մի գաղտնի ընկե-
րութիւն կազմեցին՝ անուանելով այն «Միութիւն ի
փրկութիւն»։ Երգեցան «ի խաչ, յԱւետարան և յեօթն
խորհուրդ եկեղեցւոյ, համամտութեամբ այս պայ-
մանը չժխտել և հաւատարմութեամբ պահել մինչև
արեան յետին կաթիլը»։

Ըսկերութեան նպատակն էր թիւրքաց ձեռքից
«փրկութեան միջոց մը վինտուել»։

Հիմնադիրների հրաւիրանոք և նրա գործակաների
միջոցաւ ցրւած միատեսակ և նոյնաթիւ (1872 թ.
ապրիլի 26) խնդրագրերով Վանի շրջանի մի շարք
հայ գիւղերի հասարակութեան անդամներից շատերը
դիմեցին «գաղտնի ընկերութեան մեծապատիւ Անդա-
մոց» և անդամակցեցան ընկերութեանը՝ յայտնելով
թէ «պատրաստ ենք արեան և մահու չափ ձեղ հետ
քալելու, ուր որ ալ մեր փրկութեան յոյսը զմեզ աա-
նի.՝ թէ ոռւսանալ՝ ոռւսանանք միասին. թէ գաղթել
գաղթենք. թէ վերջապէս մեռնել հասած է մեզ՝ մեռ-
նենք, բայց փրկուենք»։

Ի տեղեկութիւն ընթերցողին պէտք է այստեղ
յայտնել, որ այս անցքից 7 տարի առաջ՝ 40 վանեցին
հայեր ոռւսահպատակութեան էին ընդունել, և որովհե-

եւ թիւրք կառավարութեան հաշիւը ուղիղ
դուրս եկաւ դժբաղդաբար:

Իշխանի սպանման և Վասմեանի ձերբակալ-
ման լուրը իսկոյն Վան հասնելով, մեծ իրարան-
ցում առաջ բերեց այնտեղի գլխաւորապէս պա-
տանեկութեան և երիտասարդութեան մէջ։

Կարգանք, ընթերցող, այդ իրարանցումի
նկարագրութիւնը, որ արել է ականատես անձը:

ԿԲ.

...«Նորաշէնի հրապարակէն կանցնիմ. Ամ-
բոխը այսօր ցրիւ է եկած կարծես. Խմբաւորում-

տե այդ բանը Բ. Դրանը յայտնի չէր, ուստի Վանի
այդ ոռւսահպատակներն՝ թէ թիւրքաց հարկ էին վճա-
րում ամեն տարի և թէ ոռւսաց:

Արդ, նոյն այդ ոռւսահպատակ Վանեցիներն, որոց
մատն անջուշտ խառն է գպաղտնի ընկերութիւն» կազ-
մելու ձեռնարկութեան մէջ, «Միութիւն ի փրկու-
թիւն»-ի բոլոր անդամների աղերսագրերն՝ իրանց
առանձին խնդրագրի հետ, երկու նուիրակի ձեռքով,
ներկայացրին կովկասեան Փոխարքային, թախանձե-
լով, որ 7 տարի առաջ իրենց խնդրած ոռւս հիւպա-
տոսի նշանակումը փութեացնւի։

Երկու նուիրակներն էին «Յակոբ Կալօեան և
Նշան Շիրվանեան վանեցիք», —որոնք ոռւսահպատակ
վանեցիների յանձնարարած թղթով 1872 թ. մայիսի
9-ին՝ Երևան հասնելով՝ յունիս 8 թւակիր խնդրագրով,
թախանձեցին, «ղեւպան մը շնորհին Վանայ ի պաշտ-
պանութիւն», որով շնորհապարա կը կացուցանէք զվաս-
պուրականցիս, ուր երկնանման վանօրէից հրեշտակա-
կատիպ մշտամունջ աղօթքներ տիւ և գիշեր ձեր
անգուգական և չնաշխարհիկ կենաց օրհներգու են և
պիտի ըլլան միշտ, մինչ իրենց յետին շունչ։ (Տես
«Դիւան Հ. Պատմ.» գիրք. ԺԴ. եր. 269—276.)

ները հոս ու հոն քիչ կը նկատուեն։ Անոնցմէ մէկը կը մօտիկանա ու՝ «Ճիշտ է, կըսէ, որ իշխանը սպանուած է»։ Ծիծաղ մը գուրս կը պոժկամ ու միամիտ մարզը կծկուած իր սուտ լուրէն՝ ամօթահար կը քաշուի, կը հեռանայ։ Ամեն անգամ կոիւէ մը ետք, երբ Արամ մը, Վուամեան մը, կամ այսօր Իշխան մը կը մեկնեն միտքերը հանդարտեցնելու և կոիւն ընդհատելու, ամբոխը հոս իր երեակայութիւններով կը հիւսէ անոնց մահուան վէպը ու կը ծլւայ հրապարակին վրայ։

Այսօր հերթը Իշխանին է։ Իշխանի մահուան վէպն է հիւսած այս անգամ ու կը շաղակատեն յիմարօրէն։

Դպրոցը չմտած՝ կը հանդիսիմ ուսուցիչ Ա-ին։ «Իշխանը սպանուած է Նորաշէնի հրապարակին վրայ չէ», — կը կատակեմ,

— Նորաշէնի հրապարակին վրայ չէ, բայց ինչ կասկած որ կրնան սպաննած ըլլալ Շատախի ճամբուն վրայ, — յոռետեսաբար ու կասկածով հոգւոց քաշելով՝ կարձագանգէ ընկերս։

— Թող, իսէր Աստուծոյ, թող այդ յիմար կասկածներգ։

— Օ՛, անշուշտ կրնայ այսօր սուտ ըլլալ այդ լուրը, բայց որ օր մը պետի սպանուի Իշխանը և իր բոլոր լաւատես ընկերները, ատոր ոչ մի կասկած չունիմ ես...

— Լաւ, լաւ, գուն պատմէ, թէ ի՞նչ ճառ

ես խօսած երէկ Վուամեանին, երիտասարդներու բացատրական ժողովին մէջ։

— Ճառ, — ես ճառախօս չեմ. բայց իմ աչքերը աւելի լաւ կը տեսնեն իրականութիւնը, քան բոլոր. ճառախօսներուն, ես ճառ չեմ խօսած, այլ ճառախօս Վուամեանի սրտապատառ խօսքերէն ետք պարզ յայտնած եմ իրեն, որ այդպիսի ճառախօսները այլ եւա յեղափոխական չեն*): Պարզօրէն հարց եմ դրած — ուր կը թաղէք մեր յեղափոխութիւնը, ինչու և ի՞նչ իրաւունքով։ Որո՞ւ համար էին մեր ծրագիրները, մեր յոգնաջան աշխատութիւնները։ Որո՞ւ համար էին մեր տեսնդագին գործը, և ո՞ր օրուան համար, Որո՞ւ համար էր մեր աղքատ ժողովրդի տնտեսական ծանրագին զրհարերութիւնը՝ իր գէնքի եւ ուազմամթերքի պաշարներով, և ո՞ր օրուան համար։ Ես պարզ ըստած եմ, որ մեր զեկավարները գիտակցաբար թէ անգիտակցաբար կը կրկնեն 1908 թուականի Վանի զարհուրելի սխալը։ Զի անցնիր քանի մը շաբաթ, գուցէ քանի մը օր, և ահա գուք և անոնք կը տեսնաք մեր զինուրական ամբողջ ոյժը քայքայուած կամ թշնամիին մատնուած։

— Լաւ, շատ լաւ ճառ է ատիկա. և ես կը զարմանամ, թէ ինչպէս Վուամեանը չէ խոնար-

*.) Ընդգծումներն միշտ իմն են։ Այս խօսակցութիւնից երեսում է, որ գործիչների յարաբերութիւնը լարւած է եղել։ Ով գիտէ, թերիս այդ լարւածութեան արդինք եղած լինի Իշխանի և Վուամեանի մահը։

հած տաղանդիտ առջև ու յարաբերութիւնները չէ խզած կառավարութեանը հետ, ու մանաւանդ ի՞նչպէս քու Վոամեանը, Պօղոսը և Միհրանը աւելի շտապ՝ քան իշխան, թռան ձիուն կոնակը և յեղափոխական Շատախի կրակը մարելու գացին, կը հեգնեմ ես,

Ընկերս կը կարմրի, կը փորձէ փոխադարձարար հեգնել, բայց աւելի զայրոյթն է, որ բռնկած է իւր մէջ:

— Օ՛, գնա, գնա, կը գոշէ, գնա մանուկներուդ հէքիաթ պատմէ տակաւին և կարծէ, որ այդ անդորր աշխատանքիդ մէջ մեծ գործ կատարած կըլլաս:

Կը բաժնուինք, ես կուղամ իմ «փոքրիկ գործին»: Կը մտնեմ դպրոց *):

ԿԹ.

— Այսօր Շատախի պատմութիւնը տուր, պարոն:

Շատախի ուսուցիչը ձերբակալել են, պարոն, քեզի ինչի չեն ձերբակալել հապա:

— Շատախի ուսուցիչը յեղափոխական է, մեր պարոնը հասարակ ուսուցիչ է:

— Երնէկ Շատախի աշակերտներուն, անոնց ուսուցիչը ձերբակալած են, անոնք հիմայ դպրոց չունեն, անոնք հիմայ կը կռուին...

*) Պատմողը ուսուցիչ է Յով. Միհրարեան:

— Այս, այս, պարոն, փակենք դպրոցը ու կռուի երթանք...

Բոպէարար այդ՝ կարծես նախապատրաստուած աղմուկին ու հարցապնդումին առջև ես կը կենամ շփոթ ու շշմած: Ես ինձի կը զգամ փոքրիկ, որ հասարակ ուսուցիչ եմ ու շեմ ձերբակալուած, ես ինձի կը զգամ վախկոտ, նոյն իսկ դաւաճան նախակըրթարանի չորորդ դպասարանի իմ այս անվախ յեղափոխական փոկրիկների առջև:

Ճերջին Ժամն է, աշակերտութիւնը յորդահոս զրօսատեղին է ցրուած, ու կը յամառի ներս գալ: Դպրոցի տնտեսը նորաշէնի դուռնէն լուր մըն է բերել ու հեալով՝ անկապ կը պարէ:

— Վոամեանը ձերբակալած են:

— Ո՞ւր, Ե՞րբ, ի՞նչպէս:

— Այս, պարոն, Վոամեանը ձերբակալած են. կըսէն Իշխանն ալ սպանած են Շատախի ձամբուն վրայ: Ոստիկաններ զացեր են Արամը վնտրելու:

Արամն ալ պիտի ձերբակալեն, բոլորին, բոլորին, պարոն, փակեցէք դպրոցը, ի սէր Աստուծոյ:

Կը հաւաքուեն միւս ուսուցիչներն ալ, ոմանք կը թոշեն փողոց՝ արտառոց, առասպելական լուրն ստուգելու, հերքելու:

— Այս, դժբախտաբար, այս, ամենքը կը խօսէն, — կը եղբակացնեն լրաբերները:

Աշակերտութիւնը առանց հրաւերի կը ցըուի

ինքնին աղմուկով, վրէժով, բայց եւ սարսափով...

Հեասպառ կը հասնեմ նորաշէնի դուռը, —
ասում է Յով. Մխիթարեանը։ Կարծես ամպրոպը
ճաքած է հոս ահազնագղորդ և կայծակը հրդե-
հած է այս հրապարակը։ Ամբոխը սոսկահար
գլխապտուտ խուճապի է մատնուած։ Կը հաւաք-
ուին, կը ցրուին, կը ծաւալին ամեն ուղղու-
թեամբ։ Ամեն ուղղութեամբ կը խուժեն, բողէա-
պէս լուրը կը ստուգեն ու ըոպէապէս կը տա-
րածուեն, կը հեռանան յուղումով, վրէժով, սար-
սափով։

Լուրը կը ֆնայ տակաւին իր անորոշութեան
մէջ. — ուր ձերբակալեցին, ինչպէս, ինչու...

Կը յառաջանամ դէպի վար։

Ամբոխը կոհակ կոհակ կը խուժէ։

Ոմանք քրտնաթոր կը վագեն, չգիտես ուր,
չգիտես ինչու։ Խանութեները կը փակուին, դուռ-
ները կը բացուին, տուներու ներքնայարկերուն
մէջ խուլ աշխատանք մը կըսկսի...

Երիտասարդներու հատ հատ խումբեր սօտ-
թուած, հապճեպ, այգիներէն դէպի փողոց զիրար
կը խաչածեն, երբեմն կը փսփսան, ու ալ աւելի
փութկոտ, հեասպառ կը հեռանան։

Մանուկներ, ծերեր, կիներ, աղջիկներ,
հասակաւորների ամբողջ շարքեր լեփ-լեցուն են
փողոցներու, դուռներու, պատուհաններու մէջ։

Արտասուղներ կան, կան և լուռ իսկացող-
ներ, սարսափահար, դալուկ դէմքեր, թեթե, նոյն
իսկ ուրախ հայեացքներ, վճռական և յանդուգն

դիմագծեր, մահն անհամարհող ու դիմաւորող
արի հոգիներ կան այս վիթխարի թաղմութեան
մէջ»։

Հ.

«Կը մտնեմ Աղու էսաձորի այգեստան, —
շարունակում է պատմիչը, — ու քայլերս կուղեմ
դէպի Սահակ Պէյի տուն։ Ատիկա մեր կուուի
ճակատը պիտի լլայ, ասկէ պիտի խուժէ թըշ-
նամին դէպի մեր սիրտերը, ասկէ պիտի գայ
մահը ամենքիս համար վաղը, կամ գուցէ այսօր,
քիչ ետք...»

Դեռ նոյեմբերէն, կոտորածի և ընդհարում-
ներու առաջին կասկածի օրերէն ասիկա մեր
մարտիկների տեղն է, հոն կընամ գտնել ընկեր-
ներս, հոն կընամ ստուգել առասպելական ահա-
ւոր լուրը։

Այգիին մէջ ինձի կընդառաջեն խումբ մը
պատանիներ, սօտթուած, տասնոց ատրճանակ-
ներ, արդէն համարձակ կողէն կախ ծզած, — կը
թոշեն անոնք դէպի Խաչ-փողոց, հոն հաւանա-
կան յարձակումի մը պահուն պատուար կե-
նալով։

Այգիին դռան քով տաճարիրուհին իր աղջիկ-
ներով հանգիստ կը պարպէ տունը, Անկողիններ,
կահկարասիններ ուսած՝ (ուսն առած) կը տանեն,
կը տեղաւորեն թագստոցները, կամ բարեկամ-
ներու տուներ, որոնք «տղաներու համար զիրք
չեն, և ապահով են...»

Տան տէրը Մանուկ Կասպարեան, տունը
պարպելու ամրողջ հոգը կնոջը թողած՝ խմբա-
պետին ցուցմունքներ կընէ դիրքի և թշնամիէն
եկած հաւանական կրակի մասին, ամրութիւն-
ներ հաստատ կանգնելու մասին։ Փորձուած
մարդ է և փորձուած տուն։ 1908 թ. յունուարի
դաւաճանութեան օրը այս դիրքէն էր, որ առա-
ջին կրակը բացուեցաւ դաւաճանի վրայ, հոս էր,
որ սկսվեց յեղափոխական ուժանակը, և այս
տունն էր, որ թշնամիի կատաղի վրէժինդրու-
թեան մոխրակոյտը եղաւ»։

Խմբապետ Տիգրանը (Սոլկար) սկսած է
դիրքեր կանգնելու աշխատանքին։ Հարաւային
անկիւնը անպաշտպան է։ Աղիւսներ ներս կը
քերուեն ու թիկունք կը պատրաստեն պատին։
Արևուտք նայող պատին վրայ դիրքի ծակեր կը
փորուեն արդէն։ Վերը պատուհաններուն առջև
կը բարձրացուեն սալաքարեր և աղիւսներ։

Հոս հաւաքուած են եօթ-ութ տղաներ։

Նոյեմբերի ոռուսական նահանջէն ի վեր՝
իշխանը այս դիրքին մէջ այս տղաներուն է զե-
տեղած։ Անոնք հիմա կասկածի, սպանութեան,
կախի լուրեր են առած և ահա եկեր կեցեր են
պատնէշի վրայ, զինորի պարտականութեան
գլուխ։

Քանիները անոնցմէ դպրոցական աշակերտ-
ներ են, հազիւ 17—18 տարեկան։ Հրացաններ
չունեն, միայն տասնոց ատրճանակներով են
զինուած ու խմբապետէն հրացան կը պահան-

ջեն։ Այգին նայող սենեակն են հաւաքուեր, կը
հանուեն ու կը հագնուեն, կը զինուեն ու կոս-
տոստեն։ Հոս է քօմիկ լաւ տղայ մը—Լևոն Շալճ-
եան—Սիսօ, որ դպրոցականներու ձեռքէն ըը-
նած կըպարէ։

«Էլէք էրթանք Վարագայ սար,
Իշխանն եկաւ ձեռք մառուգէր»…
կը պարեն, կը ճռողեն, կը թոչկոտեն ու կը
սպասեն, որ առաջին գնդակը սուլէ ու իրենք
լուծեն իշխանի վրէժը»։

ՀԱ.

Փողոցը ամայի է։ Թիւրքական այգիներուն
մէջ ոչ մէկ շարժում չկայ։ Տղաները լուրն
ստուգելու ոչ մէկ հնարաւորութիւն չունեն։
Կենթագրեն որ իշխանն ալ սպանուած է, այլա-
պէս՝ Վուամեանը ձերբակալում են, մանրամաս-
ներն ալ ասոնց յայտնի չէ։ Լսած են, և ահա
ինքնեն վազած են գէպի դիրք ու կըսպասեն
կռուի ու վրէժի վայրկեանին, որը սակայն կու-
շանայ։

Այգիներով կառաջանամ գէպի Խաչ-փողոց։
Նալթանտեանի այգիին մէջ լեփ-լեցուն են երի-
տասարդներ, զինուած ու անգէն։ Կը խորհրդակ-
ցեն, կարգադրութիւններ կընեն ու կըփիճեն։
Սենեակների մէջ զինուած երիտասարդներ կը
շրջեն ու դիրքերու յարմարութիւններ կըստեղ-
ծեն։

Արհեստաւոր փոքրիկ տղայ մը, տասնոց ատրճանակը ծեռքին՝ մտքին մէջ կը սպառնայ Խաչ-փողոցի հրապարակին վրայ շրջող ոստիկանին: Ուրախ են որ իրենց դիրքը ամեն յարմարութիւններն ունի և կիշխէ թշնամիի դիրքերու վրայ և ոչ մէկ ուժ կրնայ առանց ծանր զոհերու Խաչ-փողոցի հրապարակը ձեղքել անցնել: Մտադրուած են դիմացի օթէլը մտնել այս գիշերը և հոն ես ուժեղ դիրքեր պատրաստել: Օթէլի դիրքը կիշխէ Խաչ-փողոցի հիւսիսային մասին վրայ, հիւսիւսէն և արեմուտքէն թշնամիի ամբողջ շարժումները հսկելու կարողութեան մէջ:

Զինւորները գեռ դասաւորւած չեն, ով որ կրցած է՝ եկած է՝ ով զէնք մըն է ունեցած պատրաստ՝ հոս վազած է:

Լուրի մանրամասնութիւններն ասոնք ալ չգիտեն. երիտասարդներ են և վստահ են, որ ճիշտ է թէ մինը և թէ միւսը, կը հաւատան ինչպէս Վոամեանի ձերբակալումին են, նոյնպէս և իշխանի սպանութեան, կը հաւատան, բայց յուսահատ չեն, ոչ ալ յուսատեւ: Նոյն իսկ ուրախ են, որ կոհւը պիտի սկսի վերջապէս ու իրանք ընդունակ պիտի ըլլան լուծել վրէժը, իրենք լաւատես, ընդունակ պիտի ըլլան փոխանակ դաւագրութեան շղթաներու մէջ հեծկլաւու, ըմբոստ և ապստամբ մահ մը քերելու իրենց համար»:

Հատ հատ շուկայէն Այդեստանցիներ կը վերադառնան: Իրենք ոչինչ չգիտեն: Խումաս

մըն են տեսած շուկայի թուրքերուն մէջ, որոնք շտապով փակած են խանովթնին: Հապճեպ ոգեւորւած շարժում մըն են տեսած զինւորականութեան մէջ, կած են որ Վոամեանը ձերբակալուած է: Իշխանի մասին ոչինչ չգիտեն, Շուկայէն դուրս, կառավարութեան դրան առջե իրենց պահած են քանի մը ժամով, բայց վերջէն ազատ ձգած, որ իրենց տունը երթանք*):

ՀԲ.

Վանեցիների պատենեկութեան և երիտասարդութեան այս ցոյցերից առաջ է՝ դաշնակցականները աւելի մեծ ցոյց կատարել էին զօրահաւաքութեան օրերում և պատերազմի սկըզբներում:

«Լուսակ գիշեր մը իշխանը իբր երկու հարիւր զինուած երիտասարդներ զինավարժութեան կը տանի դաշտը, որու մօտ կը գտնուի նա և թիւրք թաղ մը: Իշխան բոցավառ ճառ մը կը խօսի, որու բովանդակութեան մասին առ այժմ հարկազրուած ենք լուսութիւն պահել, Խումբի արձակած ձայներէն՝ թիւրք թաղի լնակիշները իրենց տներէն դուրս կը փախչեն սարսափահար եւ կապաստանեն թիւրքերու մօտ:

Լուրը իսկոյն կը տարածուի ինչպէս կառավարական շրջանակներու՝ նոյնպէս թիւրք ազգաբնակութեան մէջ: Դիւրին է երեակայել այսպի-

*) «Արև» 1916 թ. № 25.

սի յիմարտական ցոյցի մը, այսպիսի ծայր աստիճան գրգռիչ ընթացքի մը գործած տպաւորութիւնը թիւրք՝ արդէն իսկ վերին աստիճան կառկածու հոգեբանութեան վրայ»*):

Վանի պատանեկութեան և երիտասարդութեան վերջին ցոյցերը դուրս պոռթքացրին այդ հոգեբանութեան հետեանքը:

Երկու կողմից կրակ բացւեցաւ: Եւ թէպէտ վանեցիք մի ամսաշափ դիմագրեցին քաջութեամբ, բայց այդ գիմագրութիւնը շատ թանգ նստեց ժողովրդի վրայ: Ճէվգէտ փաշան սկսեց ոմբակոծել քաղաքը և այդ ոմբակոծմամբ՝ «300 տունի չափ մոխիր դարձան և 5—600 մարդ սպանուեցաւ **):

Այս այն Ճէվգէտ փաշան է, որ նոր կուսակալ էր նշանակւած և որ հայերի ու թիւրքերի մէջ միջնորդ հանդիսացող իտալիոյ հիւպատոսին և Ամերիկայի միսիօնէրին հետեալ պատասխանն էր տուել: «Ըսէք հայերոն, թող շեկարծնն թէ չենք զիտեք. Թիւլքիոյ հանուէլ իրենց թշնամական դիրքը զաղտնիք մը չէ մեզի համար: Զինուած խումբերը կը պտտցնեն, զինապարժութիւններ կը կատարեն: Մեր զօրքերը հայերու ոչմ է որ կը կոռուն աւելի քան ոռութու, հայ կամատըներու զնդակներէն է որ կը սպանուեն մեր զօրքերու մեծ մասը: Ռուսին

զնդակը մեր ոտքը կը ծակէ, իսկ հայոց զնդակները մեր սիրաը: Թող լաւ զիտնան հայերը, երբ չարդ սկսի հայերուն նախորդին նման չպիտի լինի քնաւ: Այս անգամ կիներուն ու երեխաներուն ալ չպիտի խնայենք»:

«Այս երկիրը կամ միախլաններուն պիտի ըլլայ ըոլորովին, կամ քրիստոնիաններուն» *):

ՀԳ.

Գիտնալով որ հայերի գլխաւոր ոյժը Վանում է գտնւում,—Ճէվգէտ փաշան հրամայեց զօրքերին և քիւրդ աշխրեթներին՝ Վանի շրջակայ վայրերի վրայ ևս յարձակւել և նրանց ևս պատժել: Եւ ահա սկսեցան Արջակի և Կարձականի հայերի ջարդերն: Ամենից սարսափելի էր Բերկրիոյ դաշտի ջարդն: Հարիւրաւոր տղամարդկանց միմիանց հետ կապուտելով ջրհորների մէջ ձգեցին ու խեղդեցին: Իսկ կնանիքների և երեխաների դիմակներով Վանի մերձակայ լճակներն ու գետերը լքցրին: Այսպէս որ այդ լճակների և գետերի ձկներն այլ ևս չէին կարողանում մարդիկ ուտել:

Լիմ անապատից Վեհափառ Կաթողիկոսին՝ ապրիլի 14-ին ուղարկւած մի խնդրագրում՝ հետեալ սրտաճմլիկ տեղեկութիւններն ենք կարում:

«Ձայն գուժի, ձայն ողբի և աղաղակի,—

*.) «Վան-Տոսպ» 1916 թ. № 16.

**) «Արարտա» 1915 թ. յունիս, էջ 455.

*) «Վան-Տոսպ» 1916 թ., № 16.

գրում են «կղղիարնակ սեաբաղդ և սգաւոր կրօնականք և աշխարականք,—տարաբաղդ որդիքդ Ազգանազեան զարմի ամենքը մէկ հարուածով յարմատէ կոտորեցան, աւերակ ամայացեալ անապատացեալ երկիր կուլայ և կը խնդրէ իր կորսուած որդիները ու չկընար գտնել, զի այլ ևս չկան»:

«Հինգ տարեկան մանուկէն մինչեւ հարիւրամեայ ծերունին սրախողլխող եղան, հարսունք և կուսանք միահամուռ գերուեցան, զիւղ և դաշտը, լեռ ու ձորը, նկուղ ու հորը լիքն են հայոց դիակներով, գայլեր ու գազաններ յագեցան հայոց արիւնով, գետեր և աղբիւրներ կարմիր փոխուած են, սակայն տակաւին մարդ գաղան թիւրք կառավարութիւնը չգոհանար, չյագենար, գեռ կը փնտոէ, գեռ կորոնէ՝ նկուղներէն՝ ձոր ու փոսերէն աղուէններու պէս դուրս կը հանէ ու կխողլխողէ»:

«Վասպուրականը որպէս ապստամբ և հակառակ ներկայացուցած է թիւրք կենտրոնական կառավարութեան, և արքայավաւեր Հրովարտակով ազատ ու համարձակ սկսեալ ապրիլի 6-ին մինչեւ 14-ը, այս տողեր գրուած ըոպէին տակաւին կը կոտորուեն անմեղ հայեր, և քար ու հողը կըներկուի հայի անմեղ արիւնով»:

«Միմիայն մօտ 3,000 երիտասարդներով *)

*) Այս բառերն ընդգծում եմ, ցոյց տալու համար, որ այդ 3,000 հոգին «Դաշնակցութեան» կրթած այն երիտասարդներից են անշուշտ, որոնք է որ թոյլ

և նոյն թւով կոյսերով ու հարսներով պատուած ծրարած կամք կիմ անապատի կղղիի մէջ՝ համբելով օրհասականնիս»:

«Ոչ մէկ կողմէ օգնութիւն, ոչ մէկ կողմէ փրկութիւն Աստուծմէ ի զատ, ի սէր Աստուծոյ, Հայր, Հայր, ողորմէ մեզ, անմիջական և երադահաս ըրէ օգնութեան ձեռքը և փրկութեան ժամը»:

«Եթէ երեք օր ալ ուշանայ՝ գուցէ ալ ոչ ոք մնայ, բացի կոճղացեալ հայ զաւառներէն»:

«Ա՛ն, սա (այսինքն Օսմանեան պետութիւնը՝ ուզում են ասել) փտած և մէջ պարապ մի ծառ էր, ինչու ուռսական մի թեթև հովտ ալ այսքան ուշացաւ»:

«Սահմաններ պարապ են, ուժ չկայ Վանի մէջ, եթէ ոսու կառավարութիւնը զբաղուած է, գէթ երկու կամ երեք հազար մեր համարիւն եղբայրներէն մեզ օգնութիւն փութացնելու շնորհ ու զժութիւն թող չզլանայ նոյն քրիստոնիայ պաշտպան հզօր կայսրութիւնն եղջիւրներու ոտքերով և արծուի թեներով» *):

են տալիս քրդերին իրանց աչքերի առաջ լլկել իրանց կանանց, իրանց մայրերին և ըոյրերին, և է որ կուի դաշտից փախչում և կղղիներին ապաւինում:

*) ԺԼ-ՐԴ դարու սկզբում երբ Պետրոս Մհծը Դարբանդից նահանջելու պատճառով նրան դիմաւորող հայ կամաւրական խմբերն և նրանց հետ միասին խաղաղ հայ ժողովուրդն պարսիկների և լէզկիների կոտաղի յարձակումներին ենթարկեցան, — ճիշտ այսպիսի աղերսագրերով հայերն քանից զիմեցին կայսեր օգնութեանը, բայց նա անկարող եղաւ օգնելու: (Տես իմ «Ազատ. շարժ.» երկրորդ պըակը էջ 19—24):

«Կը հաւատանք որ թիւրքը իսպառ պիտի իյնայ վանի մէջ, վանը պարիսպներով ներս հրդեհուած ու կոտորուած է, իսկ Այգեստանը կը լսուի թէ տակաւին կըմնայ դիմադրական, շրջապատուած բոց ու կըակով»:

«Արդ յոյսերնիս ու սրտերներիս առ Բարձրեալն Աստուած, իսկ աչքերնիս դէպի օգնութեան շաւիղներ յառած՝ կը սպասենք կիսամեռ, Արդեօք, հայր մեր, չենք գիտեր թէ ձեր^{*)} օգնութիւն երագահառ պիտի լինի, եթէ ոչ թիւրք կառավարութեան թնդանօթներ կամ զինուրներով լեցւած նաւերը»^{**)}։

ՀԴ.

Վանի ու նրա շրջակայքի ըմբոստացումներն ու կոտորածները հետզհետէ հեռաւոր վայրերն տարածւեցան և այն արդիւնքն արտադրեցին, ինչ որ վանի ու նրա շրջակայքում։

Այդ կոտորածների նկարագրութիւնով լրագրութիւնը լիքն է նոյնպէս, բայց մենք մեր ընթերցողների հետ բաւականանք լոկ այն նկարագրութիւնով, որ Մանազկերտի Առաջ-

*) 1912 թւականից սկսած՝ Վեհափառ Կաթողիկոսի միջամտութիւնն ու ցոյց տւած պաշտպանութիւնը՝ բարեմիտ տաճկահայութեանը այն յոյսն էր ներշնչել՝ թէ ուրեմն, անհրաժեշտ դէպում, Վեհափառ ձեռնհասութիւն կունենայ զինուրական օգնութիւն ևս հասցնել իրանց։

**) «Արարատ» 1915 թ. փետր.—մարտ, էջ 150։

նորդական փոխանորդը արել է մայիսի 7-ին Վեհափառ Կաթողիկոսին ուղղած պաշտօնական իր գրութիւնումը։

— «Հայաստանի մէջ տեղի ունեցած աղէտավլի գէպքերն ու արիւնուա անցքերն անշուշտ հիմա իմացած կըլլաք, արիւնաբու օսմանցիները արիւնով ողողեցին Վասպուրականի ու Տարօնի գաւառները, առանց տարիքի ու սեռի խարութեան մորթեցին ծերերը, երիտասարդներն ու կաթնկեր երեխաները, Մանազկերտի սահմանի վրայ գտնուղ և Վասպուրականին պատկանող Արտիշ (Ականց) և Ալճավազ (Արծկէ) գաւառներու կոտորածներուն նայելու ըլլանք, վանի նահանգին մէջ հայ չեն թողուցեր, հայ խաղաղ բնակչութենէն մօտաւորապէս 20,000 մորթեր են։

Ապրիլի 28-ին գրաւուեցաւ Մանազկերտի գաւառակը ոռւսական յաղթական բանակի կողմանէ, բայց առանց դիմակրութեան այդ գրաւումը, շատ սուղ նստաւ մեր հայ ազգաբնակութեան վրայ, թիւրք, քիւրդ մոլեռանդութեան այլ ևո չափն անցած էր, իբրև թէ հայերը գրաւած ըլլային զայն (Մանազկերտ), քրդական հրոսակախումբերը մէկ կողմանէ, իսլամ գաղթականներու խուժանն ալ միւս կողմանէ յարձակեցան մեր դրացի Բուլանըգի, Խլաթի (Բզնունիք) և Խնուսի գաւառակներու հայաբնակ գիւղերու վրայ ու սկսան անգթաբար մորթել ու յոշոտել հայ մշակն իր սիրական հողէն ու ջրէն,

կաթնկեր մանուկն ալ իր գրկէն ու ոտինքէն.
Բուլանգի հայեր միայն ազատւած են, զիշեր
ատեն փախչելով ոռւս բանակի գրաւած վայրե-
րու սահմանները»:

«Վարի Բուլանգի 13 հայ գիւղերու աւելի
քան 2,000 ընտանիքներէն, Խլաթի 22 հայ գիւ-
ղերու 4,500 տուն—ընտանիքներէն և Խնուսի,
Գարաչոպան, Գովանտուկ, Սալորիկ և Գրմա-
ցեա գիւղերու 4,000 անձերէն, ծմակներու ու
մեջէն գաղտազողի փախչելով՝ հազիւ թէ 150
հոգի եկեր, բերեր են սկ լուրեր ու սկ խաղ-
րիկներ մեր արիւնոտ եղբայրներէն ու բզբուած
քոյրերէն:

Փախչողներու պատմութեանը նայելով՝ Բա-
ղէշ, Կարին, Մշոյ քաղաքն ու Մշոյ դաշտն ալ
սուրէ անցուցեր են, բայց քանակն ու չափն
չգիտցուիր, իսկ մեր և Անթապ (Տութաղ) գա-
ւառակներու ցանուցրիւ սպանուածներու թիւը
1,000-ի կը մօտենայ: Վիճակագրութիւնը յետոյ
կը դրկեմ»:

«Ողորմելի վիճակի մը մէջ կը գտնուին նա
և գաւառիս սահմաններու մէջ ապաստանող
40,000 անձ գաղթականները, զրկուած իրենց
բնավայրերէն մերկ, սովալուկ ասդին կը զարկ-
ուին, անդին կը զարկուին

• • • • •

Ուստի հաղորդելով զայսոսիկ Զերդ Վեհա-

փառութեան ի գիտութիւն, հայ ազգի անունով
կըխնդրեմ, ուր որ անկ է շնորհ բերէք ներկա-
յացնել ողբալի հայ ժողովրդեան վիճակն և
խնդրէք Ամենաողորմած Ցարի Կառավարութիւ-
նը, որ ուշադրութիւն դարձնեն այս բազմաչար-
չար ժողովրդեան պէտքերու ու ցաւերում վրայ,
արուի հրաման բանակին առաջ խաղալու գէպի
հայաշատ Տարօն, որքան որ կոտրածները խո-
շոր համեմատութիւններ չեն ստացեր, մինչեւ որ
համաշխարհային արիւնառուշտ պատերազմը
վերջ գտնէ և կարգապահնութիւն ու խաղաղու-
թիւն վերահաստատուի»*):

ՀԵ.

Ի հետևումն իրան եղած այս դիմումներին՝
Վեհափառ Կաթողիկոսը՝ ըստ նախընթաց հաճու-
թեան փոխարքային՝ ապրիլի 7-ին հեռագիրնե-
րով դիմեց արտաքին գործերի մինիստրին,
Խտալիայի էմմանուէլ [1] թագաւորին, Ամերի-
կայի Միացեալ Նահանգների նախագահին, Ֆրան-
սիական չանրապետութեան նախագահին և Ան-
գլիայի Գեորգ 6-րդ թագաւորին՝ խնդրելով
իրենց դեսպանների միջոցաւ և նրանց ազդե-
ցութեամբ վերջ դնել տաճկահայերի ջար-
գերին:

Նորին Վեհափառութիւնը հեռագրով դիմեց
նա և Պօղոս փաշա Նուպարին և իր վերոյիշեալ

հեռագիրների իմաստը ծանուցանելով՝ առաջարկեց «Նորին Գերազանցութեանը» իբրև կաթողիկոսական ներկայացուցիչ և «նախագահ հայկական պատգամաւորութեան ամեն հսարաւորը գործ դնել ի պաշտպանութիւն մեր ժողովրդի թիւրքիայում»:

Սազօնովը իրեն ուղարկւած հեռագրին ապրիլի 9-ին այսպէս պատասխանեց՝ «Ես առաջարկել եմ մեր դեսպաններին՝ իտալիայում և Միացեալ Նահանգներում՝ պաշտպանել ձեր դիմումը»:

Իսկ Անդլիայի արտաքին գործերի մինիստրը Գրեյը այսպէս պատասխանեց ապրիլի 30/13 մայիսի՝ «Նորին Մեծութիւն Թագաւորը հրամայել է ինձ տեղեկացնել Զերդ Սրբութեան սոյն ամսոյ 4-ի հեռագրի ստացումը և յայտնել, որ Տաճկաստանի հայերի գրութիւնը զրաւել է Նորին Մեծութեան Կառավարութեան ուշադրութիւնը»*):

Այսուհետեւ Երրեակ Դաշնակցութեան պետութիւնները սիմիանց հետ բանակցելով Օսմանեան կառավարութեանը հետևեալ հեռագիրը ուղարկեցին մայիսի 12-ին՝ «Հայաստանում տեղի է ունենում հայերի կոտորած վերջին ամբողջ ամսուայ ընթացքում, քրդերի և տաճիկների ձեռքով, Օսմանեան իշխանութիւնների պարզ

*) «Արարատ» 1915 թ. փետրվար—մարտ, էջ 170—176.

անվութութեան պատճառով, և Երբեմն էլ նրանց անմիջական աջակցութեամբ»:

Ապրիլի կիսին (նոր տոմարով) տեղի է ունեցել հայերի կոտորած երգումում, Բերջանում, էգինում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Զէյթունում և ամբողջ Կիլիկիայում:

Վանի շրջակայքում գլխովին կոտորւած են հարիւրաւոր գիւղերի բնակիչներ: Վանում քիւրդերը պաշարել են հայկական մասը: Միենոյն ժամանակ Պօլսում թիւրք կառավարութիւնը ձերբակալում և անլուր ճնշումների է ենթարկում խաղաղ հայ բնակչութիւնը: Նկատի առնելով այս նոր ոճիրները, որ գործում է թիւրքիան մարդկութեան և քաղաքակրթութեան դէմ Մուսաստանի, Ֆրանսիայի և Անդլիայի գաշնակից կառավարութիւնները հրապարակով յայտարում են Դրանը, որ իրենք այս բոլոր ոճիրների համար անձնական պատասխանատվութիւն են գնում թիւրք կառավարութեան բոլոր անդամների, նոյնպէս Օսմանեան իշխանութիւնների այն տեղական ներկայացուցիչների վրայ, որոնք մասնակից եղած կը լինեն այդպիսի կոտորածների»*):

ՀՀ.

Ինչպէս որ սպասելի էր՝ թէ Վեհափառ Կաթողիկոսի քաշած հեռագրական խնդիրներն և

*) «Արարատ» 1915 թ. ապրիլ—մայիս, էջ 302:

թէ երբեակ Դաշնակցութեան այս հեռագիրը
ոչ մի ազդեցութիւն չարին Օսմանեան կառա-
վարութեանը վրայ և ոչ մի գործնական արդիւնք
առաջացրին յօգուտ խոշտանգուղ ու տառապող
ժողովրդի։ Այլ ընդհակառակը՝ կարելի է ասել՝
առաւել ևս գրգուեցին թիւրքերին..., — մի երե-
ւոյթ որ խիստ յաճախ տեղի է ունեցել հայ աղ-
քի պատմական և ժամանակակից կեանքում, և
որ այնուամենայնիւ մազի չափ խելքի ու դի-
տակցութեան չէ բերել մեր ազգի քաղաքական
գործիչներին և մեր գիտումատ—խիկար իմաս-
տուններին, — եթէ անդամ ընդունենք այն առաս-
պելն իրը թէ՝ հայ ազգը, իր ողորմելի, ցաք ու
ցրիւ և հպատակ տեղովը՝ կարող է ինքնուրոյն
դիպլոմատներ և գործիչներ ունենալու, այլ ոչ
թէ սոսկ քաղաքական մարիօնէտներ և մանե-
կէններ...

... Այսպէս թէ այնպէս՝ ձէվդէտ Փաշան*
երբ լուր առաւ թէ ոռուսական բանակը արդէն
Վանին մօտիկացել է, — թողեց Վանը և հեռացաւ:
Երկու օրից յետոյ՝ երկրորդ հայ կամաւրական
խումբը մտաւ Վան, և մի օր հանգստանալուց
յետոյ՝ տեղական զինւած երիտասարդներին հետը
վերցնելով՝ անցաւ զնաց Շատախ՝ թէ քրդերի
հետ այնտեղ կուող ժողովրդին օգնելու համար,
և թէ մանաւանդ լճի հարաւային ափով ընթա-
ցող ոռւս բանակի ձախակողմեան թեր ապահո-
վելու համար։

Դրանից յետոյ, և միենոյն նպատակաւ՝

երկրորդ խումբը անցաւ Մոկս, ուր թիւրքերի
հետ ունեցած մի յաջող ընդհարումից յետոյ՝
մտաւ Խեչանի և Բոթանի խորքերը՝ առաջացող
ոռւս բանակի համար հետախուզութիւններ ա-
նելու նպատակաւ։

Չորս օրից յետոյ՝ երկրորդ խմբին միացաւ
կամաւրների չորրորդ խումբն ևս՝ և խառնւելով
ոռւս բանակին սկսեցին յաջողութեամբ յետ մղել
ու յաղթահարել թշնամոյն, թէպէտ և իրանք
էլ յետ մղելով դէպքի ենթակայ եղան։

Բայց մի կողմ թողնելով պատերազմական
այդ գործողութիւնների մանրամասնութիւննե-
րին մէջ մտնելն, ընթերցողին հետ անցնենք
Վան։

ՀԵ.

Երկրորդ կամաւրական խմբի Վան քաղաքը
մտնելու երկրորդ օրը, որ էր մայիսի 6-ը, գե-
ներալ Նիկոլայեվը մտաւ այստեղ, ուր վանեցի
ուազմիկ խմբի ղեկավարը, գաշնակցական յայտ-
նի Արամը, նրան յայնձնեց քաղաքի բանալի-
ները։

Մուս զինւորական իշխանութիւնը նոյն այդ
Արամին՝ Վանի նահանգապետ կարգեց՝ իրաւունք
տալով նրան հայերից մի ժամանակաւոր վար-
չութիւն կազմակերպել նահանգը կառավարելու
համար։ Եւ Արամը կազմակերպեց... ամենամեծ
մասամբ իր ոռուսահպատակ կուսակիցներից ու
համախոներից։

Վանի ոռւսաց ձեռքն անցնելն ընդհանուր ցնծութիւն առաջ բերեց ոռւսահայերի մէջ ամենուրեք: Հոգևոր բարձրագոյն իշխանութեան կարգադրութեամբ՝ եկեղեցիներում մաղթանքներ կատարեցան և բեմբասացութիւններ ու ճառախօսութիւններ տեղի ունեցան:

Գալով Արամի նահանգապետ կարգւելուն,— հայ լրագրութեան ոգևորութիւնը, կարելի է առել, չափ ու սահմանից անցաւ:

Բացի այդ գտնւեցան մարդիկ, հրապարակախօններ որոնք,— հակառակ հայկական իմաստուն առածին թէ՝ «գեռ գեալ չհասած, մի բորբիկնալ»,— սկսեցին այս ու այն ծրագիրը կազմել... իրենց երևակայութեան մէջ:

Ինչ ասել կուզի որ ընդհանուր ցնծութեան և ոգևորութեանը ջերմ մասնակից էր նա և մեր «Ազգային Բիլօն», որ փոխարքային գիմելով՝ իրաւունք խնդրեց կամաւորական չորս նորանոր խմբեր կազմակերպելու՝ իւրաքանչիւրն հազար հոգուց բաղկացած

Ափսոս միայն որ այդ ընդհանուր ցնծութեան ու ոգևորութեան միջոցին, — և թերեւ նրանց պատճառաւ, — հայ հասարակութեան մէջ մույլ լուրեր տարածեցան թէ պատերազմական գործողութիւնների վայրերում՝ ոռւս զիւրական շրանքների մէջ պատճառաւ, անբարեացակամ, մինչև իսկ թշնամական վերաբերմունք են ցոյց տալիս գէպի հայ կամաւորական խմբերն ու գէպի հայ ժողովուրդը:

Սյովիսի անբարեացակամ վերաբերմունք ցոյց տւողներ կային պատերազմի սկզբի ամիսներում, բայց այդպիսիներն այն ժամանակ անհատներ էին, այլ ծագմամբ, ոչ ոռւս անհատներ, իսկ այժմ անբարեացակամութիւնը կարծես ընդհանրանում է, և ոռւս դիպոմատիայի համակրութիւնը՝ քրդերի կողմն է թեքում՝ տուաշանից աւելի մեծ չափով:

Միմեանց յաջորդող փաստերն եկան հաստատելու այդ երկոյթը:

* * *

ՀՀ.

Ստանձնելով Վանի շրջանի նահանգապետութիւնը՝ Արամը գիմեց Վեհափառ Կաթողիկոսին հետեւալ գրութեամբ՝ գրւած 1915 թ. մայիսի 26-ին № 350, — որի ընդգծումներն և նկատողութիւններն իմն են:

«Վեհափառ Տէր,

«Անշուշտ հաճոյքով և ցաւով լսեցինք ամբողջ Հայաստանի և մանաւանդ Վասպուրականի վիճակի մասին: Կը հաւատամ, որ հաճոյքով, որովհետև հայերն ամեն բան ըրին իրենց ազգային պատուի փրկութեան համար *), բայց և

*) Ի շնորս իրենց գրգռչական գործովութիւնների՝ ազգի գլխին եկած ամեն մի փորձանքն ու տառապանքը դաշնակցականները միշա այդ բառերովն են արդարացնում:

ցաւով, որովհետև հակառակ ամենքի ցանկութեան, չյաջողեցանք շատ մը գաւառները փրկել թիրք-քրդական խժութիւններէն *): Գաւառներու մէկ մասը ենթարկւեցաւ կոտորածի, թալանի և համարեայ ամբողջ գիւղերը հրկեզուեցան, բացի Շատախի մաս մը գիւղերէն, որոնք փրկւեցան մեր քաջերու ինքնապաշտպանութեան շնորհիւ **):

Այժմ գաւառներու և քաղաքի պատկերը, — պարզերեսութեամբ գրում է Վանի Շհանհան-գապետը, — այս է:

Ամբողջ գիւղերը աւրուած ու հրկեզուած, ոչխար, եզ, տուն, երկրագործական գործիքներ թալանուած: Երկամսեայ գէպքերու շնորհիւ հոս հոն փակուած կամ լեռներու վրայ խոտով կերակրուելուն պատճառով սոսկալի հիւանդութիւններով բռնուած, (տիֆ և մանաւանդ տիգանթերի) երեխաների սոսկալի և մեծաքանակ մահացում: Գիւղական աշխատանքներու վերսկսման, և գիւղերու վերաշնութեան անկարելիութիւն, որովհետև լեռներն ապաստանած քիւրդերը գեռ հանգիստ չեն տար հայ գիւղացիներուն իրենց գիւղերը տեղաւորուելու և վերաշննելու: Ռուսական զօրքի յաղթական մուտքէն վերջ բազ-

*) Արգեօք հրն է, կամ որմնք են այն գաւառները, որոնք փրկելու յաջողներն աղջնակցականները:

**) Բայց որոնք, վերջ ի վերջոյ, նոյնպէս հրկեղւեցան:

մաթիւ յարձակումներ եղան *): Աբաղայ, Արձակ, Արձեշ, Ալճաւազ, Մոկս և Շատախ, Եւ դեռ կը շարունակուին Մամրտանքի և Սպարկերտի շըրջանի կոիւները»:

— «Եթէ անմիջական դրամական օգնութիւն չհասնի կովկասէն, — դաշնակցական գործիչների սովորական սիստեմին գիմելով շարունակում է Արամը, — այն ինչ որ չկրցաւ ընել թիւրքի եաթաղանը, պիտի ընէ... և մանաւանդ տարափոխիկ հիւանդութիւնը»:

«Կը խնդրեմ «Եղբայրական Օգնութեան կոմիտէն», որ անմիջական դրամական օգնութիւն հասցնէ աւրուած գիւղերու, տուներու վերաշնութեան և գիւղատնտեսական գործիքներու և կենդանիներու հայթհայթման համար»:

«Արդէն իմ նախագահութետումբ կազմակերպուած են գաղթականներ տեղաւորող և նպաստօգնութիւն հասցնող կօմիտէներ: Տեղական միջոցներով գործի ենք սկսած, որն արդէն սպառելու վրայ է: Լաւ կըլինէր, որ գումարներ տրուէր այդ կօմիտէներու արամազրութեան տակ, որ պիտի մանրամասն հաշիւ տայ ձեզ, անշուշտ իմ հսկողութեան տակ:

Աւելորդ է ըսել, որ բժշկական օգնութեան գործը, բազմաթիւ բժիշկներով, գեղագործներով և մեծաքանակ գեղերով անհրաժեշտ է, որ անմիջապէս ճամբայ ելլեն...»:

*) Հապա հրտեղ են և ինչ են շինում հայ ինքնապաշտպանութեան կարծեցեալ հերոսները:

«Կը յուսամ, որ ի նկատի առնելով այս բացառիկ վիճակը, կոչ կընէք բոլոր բարեգործական և կուլտուրական ընկերութիւններուն, որ անմիջական օգնութեան հասնեն Վասպուրականին»:

«Գիտի խնդրէի նոյնպէս, Վեհափառ Տէր, որ անմիջապէս թելազրէք Այվատեան սրբազանին, որ վութար Աղթամարի կողապտուած վանքը հասնելու դրամական օժանդակութիւններով, և վարէր Աղթամարի կաթողիկոսական տեղապահի պաշտօնը, որը թափուր կը մնայ այժմ»*):

ՀՅ.

Վեհափառ Կաթողիկոսին ուղղած այս գրութիւնից մի ամիս յետոյ, այն է յունիսի 23-ին նահանգապետ Արամը՝ իբրև Վանի շրջանային վարչութեան պետ, մի կոչ էլ հայ ժողովրդին ուղղեց՝ միևնոյն նպատակով, — տաճկահայերի ծով կարիքներին օգնութիւն հասնելու յորդութելով։ Այդ կոչն ևս ամբողջովին արտատպում ենք՝ ընթերցողին ծանօթացնելու համար՝ եղած օգնութեան չափը և կարիքի քանակը։

«Հայրենակիցներ! — գրում է Արամը, — հաճայքով լսեցինք այն բուռն ոգերութիւնը, որ առաջ բերին Վանի մի ամսեայ ինքնապաշտանութեան կոիւները կովկասի և գաղութների մեր հայրենակիցներու մէջ։

«Փողովուրդը ուժասպառ, յամեցած և քայ-

քայուած, իր յոյսը դբաւ Կովկասի և արտասահմանի եղբայրներու վրայ, որ անոնք կուգան իր աւրուած տուներու, քանդուած օջախներու, հազարաւոր հիւանդներու և քայքայուած տնտեսութեան վերակազմութեան օժանդակելու»։

«Ծնորհակալութեամբ արդէն ստացանք բաւականաչափ գումարներ Ս. էջմիածնէն, Թիֆլիսէն և Բագուէն, տեղս հասաւ «Եղբայրական Օգնութեան Կոմիտէի» բժշկական խումբը, — մէկ բժիշկ, մէկ ֆելտչէր և մէկ գթութեան քոյր։ Երէկ տեղս հասան Թիֆլիսի Կ. Կոմիտէի և Հայ Բարեգործական Ընկերութեան բժշկական խումբն ևս, — երկու բժիշկ, 3 կին բժիշկ օգնականներ, կ. Կոմիտէի ներկայացուցիչ պ. Սարգիս Աբովեանը, գաղթականներուն մննունք բաշխելու գործը կարգագրելու համար։ Երկու խումբերն ալ բերած են բաւականաչափ գեղորայք, հազուսա, շաքար և այլն։

Արդէն գործի ենք սկսած։

«Եղբայրական Օգնութեան» Կոմիտէն բացած է քաղաքի մէջ բուժաբան իր բժշկով և օգնականով։ Պատրաստութեան մէջ ենք վարակիչ հիւանդութիւններու աւանձին հիւանդանոց մը բանալ քանի մը օրէն։ Վեհափառ Կաթողիկոսը նոյնպէս հրամայած է 56 անկողինով հիւանդանոց մը բանալ։ Որոշած ենք այդ հիւանդանոցը հիմնել կանանց, երեխաներու և առնասարակ ոչ վարակիչ հիւանդութիւններու համար։

*) «Արարատ» 1915 թ. յունիս, էջ 453։

«Թիֆլիսի կ. Կոմիտէի բժիշկներէն պ. Քո-
չարեանը պիտի մեկնի վաղը Ոստան, հոն բժշկա-
կան գործը կազմակերպելու»:

«Երևի գիտէք, որ գործերը վարելու համար
արդէն կազմուած է սրբազան Այլատեանի նա-
խագահութեամբ «Եղբայրական Օգնութեան» Կո-
միտէ մը: կ. Կոմիտէի բժշկական խումբը գալէն
ետքը գործը համերաշխութեամբ և միացեալ
կերպով վարելու համար համաձայնութեան եկանք
կ. Կոմիտէի գլխաւոր բժիշկ պ. Հ. Օհանջանեա-
նին—պ. Ս. Արովեանը վերցուցինք վերոյիշեալ
կազմին մէջ»:

«Այս ձեռվ գործը կազմակերպելու ձերն
մէջ դրինք գրեթէ: Փութամ աւելացնել և այն,
որ նախ քան Կովկասի օգնութեան հասնելն, և
գալէն ետքն ալ աշխատեցինք աեղական միջոց-
ներով ալ կազմակերպել գաղթականներու օգնու-
թեան գործը: Տեղական միջոցներով մինչև հի-
մայ հայթհայթած ենք մօտ 10,000 փութ ցո-
րեն, որու կէսը արդէն ցրուած է և կէսն ալ նոր
կը ցրուի, կազմուած կոմիտէի տրամադրութեան
տակ: Արդէն բաշխած ենք կարիք ունեցող զիւ-
ղերուն մօտ 8—10,000 ռշխար և 2,000-էն ա-
ւելի սեատաւար»:

«Դիւրութիւն ենք ստեղծած Ոստանի մէջ,
ուր բոլոր հիւանդները ձրիաբար, տեղական մի-
ջոցներով կաթ, մածուն և այն կըստանան: Այս-
պիսով աշխատած ենք դուրսի օժանդակութեան

հետ՝ տեղացին ալ մասնակից ընել ժողովուրդը
չայլասեռելու համար»:

Զ.

«Կարիքի պատկերը,—շարունակում է Արա-
մը,—այսպէս կարելի է պատկերացնել:

Այբողջ վասպուրականը հիւանդանոցի է
փոխուած: Տուն չկայ, որ մէկէ աւելի հիւանդ-
ներ չունենայ: Աւելի ծանր է վիճակը Ոստանի
—Աղթամարի շրջանին մէջ, ուր հաւաքուել են
Սպարկերտի, Մամրգանքի, Խիզանի, Կարկառի,
և Կարճկանի ժողովուրդը,—15—25,000 հոգի,
որոցմէ նուազագոյնը 2—3,000-ը հիւանդ են:
Հիւանդութեան տեսակները մեծ մասմբ տիֆն
է իր բոլոր նմուշներով և տիզանթերի և այն:
Նոյնն է և Թիմար կոչուած շրջանին մէջ:

Հոն հաւաքուած էին և են Ալճաւաչի և Բեր-
կրիի շրջանի հայերը: Հիւանդութիւնները սոս-
կալի են և բժշկական ոչ մէկ օգնութիւն չենք
կըցած հասցնել:

Աւելի սոսկալի է սուրի քաշուած Արճեշի
վիճակը: Հոն մօտ 5,000 ժողովուրդ կայ անտէր
անտիրական և հիւանդ: և իրը աւելի հեռու ըն-
կած գաւառ աւելի քիչ է խնամքի արժանացած:
Ի գէպ է ըսել, որ առհասարակ բժշկներու հետ
պայմանաւորուելու էք, որ անոնք ի պահանջել
հարկին համաձայնեն գաւառն ալ երթալ: Գերա-
դասութիւն տուէք աղամարդ ֆէլշէրներուն,


որոնք միայն կրնան զիմանալ գաւառի և զիւղի գժուարութեանց։ Խոկ մնացած գաւառները, ուր թէ և դադթականներ չկան, բայց ամբողջ աղ-գաբնակութիւնը հիւանդ է։ Պէտք է նկատել, որ եթէ շուտով համաձարակի առաջքը չառնուի, ժողովուրդը, դեռ ձմեռը չհասած, սովամահ պիտի ըլլայ, որովհետեւ աշխատող ձեռքերը, եթէ դաշտային աշխատանքին չհամնեն, բերքերը կը մնան անքաղ։

Պէտք է ուրեմն անմիջապէս լրացնել բժշկական օգնութեան գործը։

Անհրաժեշտ են բժիշկներ և օգնականներ և զեղորայք՝ 1) Արձէշի, 2) Ալճաւազի, 3) Թիմարի, 4) Բերկրիի, 5) Արճակի, 6) Հայոց Զորի, 7) Շատախի, 8) Մակսի շրջաններու համար։ Եթէ անհնար է բժիշկներ գանել, կարելի է 4 բժիշկնով և քանի մը ֆէլտչէրներով գոհանալ երկու գաւառին մէկ բժիշկ տալով, այսինքն 2,000 հիւանդին՝ մէկ հոգի։ Բժշկական գործի հետպէտք է կազմակերպել և սնունդի ու նպաստի գործը։ Փաստերը ցոյց են տուած, որ շատերը մահացած են սովի և շատերը հիւանդացած մնունդ չըլլալուն պատճառով։

«Որոշած ենք մեր տրամադրութեան տակեղած մօտ 50,000 բուբի գումարէն որոշ տոկոս մը յատկացնել հացահատիկներու գնման թէ ներկայի և թէ ձմբան համար»։

«Պէտք է նոր գումարներ հասցնել հիւանդանոցներու, բժշկական օգնութեան, մնունդի և



1. ԶԷՆԻՄՊՐ—զէնիտը
2. Թլխագին
3. Ապօրինի զաւակը
4. Գինեղեկ
5. Ռաֆֆիլ „Կայծերը”
6. Կացինը քարին կպու
7. Մտորումներ
8. Պատմական թագւածներ Ա. պրակ.
9. Պատմական թագւածներ Բ. „
10. Պատմական թագւածներ Գ. „
11. Պատմական թագւածներ Դ. „
12. Պատմական թագւածներ Ե. „
13. Պատմական թագւածներ Զ. „
14. Պատմական թագւածներ Է. „
15. Իսրայէլ Օրինե իր բաղաքակ. ծրագիրը
16. Հայկական հարցի երկրորդ շրջանը
17. Հայկական հարցի երրորդ շրջանը
18. Հայկական հարցի չորրորդ շրջանը
19. Հայկական հարցի հինգերրորդ շրջանը
20. Հայկական հարցի վեցերրորդ շրջանը
21. Պատմութեան դասերը
22. Հրապարակախօսական մանրունը Ա. պր.
23. Պատմական թագւածներ Բ. պրակ
24. Պատմական թագւածներ Ծ. պրակ
25. Պատմական թագւածներ Ժ. պրակ
26. Ռոճիկ բահանաներին
27. Հայկական հարցի եօթներորդ շրջանը
28. Պատմական զրոյցներ Ա. պրակ—50 կ.
29. Հայկական հարցի եօթներորդ շրջանը. Մասն Ա.
գինը 50 կոպ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0202104

